

«ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ, ENPI/2013/334643

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ՆՊԱՍՏԱՌՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC), 2015



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական Միության կողմից



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ՆՊԱՍՏԱՌՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Սույն զեկույցը մշակվել է «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից «Քաղաքականությունների բարելավմանն ուղղված երկխոսություն և քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնում» ծրագրի շրջանակներում բյուջեարային ծրագրերի գնահատմանն ուղղված ուսումնասիրությունների բաղադրիչի ներքո իրականացված փնային փնտրությունների ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա: Ծրագիրն իրականացվում է Օքսֆամի հետ համագործակցությամբ՝ ԵՄ ֆինանսավորմամբ:

Արտահայտված տեսակետները և եզրահանգումները պատկանում են հեղինակներին, դրանք կարող են տարբերվել և չհամընկնել Եվրոպական Միության կամ ՀՀ պետական որևէ մարմնի պաշտոնական տեսակետների և, կամ դիրքորոշումների հետ:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել ՏՁՀԿ գրասենյակ՝ +374 (0) 60 540 289, info@edrc.am, www.edrc.am:

Զեկույցից օգտվելիս՝ պարզաճ հղումը պարտադիր է:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ՆՊԱՍՏԱՌՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

© «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ», 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	4
1.1 Ծրագրի մասին	4
1.2 Տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունը	4
1.3 Մեթոդաբանությունը	6
1.4 Զեկույցի նպատակը և կառուցվածքը	8
2. ՏՏ-ների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները	9
2.1 Սեռատարիքային կառուցվածքը	9
2.2 Կրթական մակարդակը	14
2.3 Սոցիալական կազմը. գործազուրկներ, ծերեր և հաշմանդամներ	15
2.4 Միգրացիա և միգրացիայի հակվածություն	16
3. Կենցաղային պայմանները	19
3.1 Բնակարանային պայմաններ	19
3.2 Զեռուցում	20
3.3 Կենցաղային տեխնիկա և կոմունիկացիաներ	21
4. Տնային տնտեսությունների եկամուտները և ծախսերը	23
4.1 Եկամուտների աղբյուրները	23
4.2 Սննդամթերքի սպառում և առաջնային ծախսերի բավարարություն	24
4.3 Կոմունալ ծախսեր և վճարներ	28
4.4 Պարտքի կառուցվածք և ֆինանսական դիրք	29
5. Աղքատության պատկերը և Նպաստառու ՏՏ-ները	32
6. Առողջապահական պատկերը	36
7. Հիմնական արդյունքներ և եզրահանգումներ	41
Գծապատկերների ցանկ	46
Աղյուսակների ցանկ	47
Օգտագործված հապավումների ցանկ	48

1. Ներածություն

1.1 Ծրագրի մասին

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC)¹, համագործակցելով Օքսֆամի հետ, Եվրոպական Միության ֆինանսավորմամբ իրականացնում է «Քաղաքականությունների բարելավմանն ուղղված երկխոսություն և քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել պետական բյուջետային ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, հիմքեր ստեղծել քաղաքացիական հասարակության ու հանրային հատվածի արդյունավետ համագործակցության, իրազեկ քննարկումների և որոշումների համար: Ծրագիրն իրականացվում է համագործակցության լայն շրջանակներում՝ ներառելով պետական շահագրգիռ գերատեսչություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ), լրատվամիջոցներ և ՔՀԿ ցանցեր:

Ծրագրի շրջանակներում ՏՀՀԿ-ն իրականացրել է կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումներ, առանձին ոլորտների պետական բյուջեների պարզեցումներ, ինչպես նաև ընտրված առանձին բյուջետային ծրագրերի մոնիտորինգ և գնահատում:

Ծրագրում մեծ կարևորություն է տրվում քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացմանը: Դրա համար ընտրվել և Ծրագրի շրջանակներում ընդգրկվել են 40 հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ): 2014-2015 թվականների ընթացքում այս կազմակերպությունների համար կազմակերպվել են մի շարք վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված հանրային ծրագրերի և բյուջետային գրագիտության բարձրացմանը, մոնիտորինգի և գնահատման մեթոդներին, հետազոտական գործիքներին: Առաջիկայում ևս նախատեսվում են մենթորինգի միջոցառումների իրականացում:

Ծրագիրը հասցեագրում է գյուղատնտեսության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտները: Յուրաքանչյուր ոլորտից, ոլորտի պատասխանատու պաշտոնյաների և գործընկեր 40 ՀԿ-ների հետ համատեղ, ընտրվել են 2-ական բյուջետային ծրագրեր (ընդամենը 6 ծրագիր), որոնք ենթակա են անկախ մոնիտորինգի և գնահատման: 2015 թվականին ՏՀՀԿ-ն, ներգրավելով նաև գործընկեր ՀԿ-ներին, իրականացրել է 3 բյուջետային ծրագրերի մոնիտորինգ և գնահատումներ: Կիրառվել են մի շարք հետազոտական մեթոդներ, սակայն տվյալների հիմնական աղբյուրը հանդիսացել է տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունը:

Սույն փաստաթղթում ամփոփվում են սոցիալական պաշտպանության և առողջապահության ոլորտների բյուջետային ծրագրերի գնահատման համար իրականացված տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքները:

1.2 Տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունը

Ծրագրի շրջանակներում մոնիտորինգի և գնահատման համար ընտրված 6 բյուջետային ծրագրերը բավականին տարբեր են իրենց մասշտաբներով, շահառուների քանակով և բնույթով: Հետևաբար, յուրաքանչյուր բյուջետային ծրագրի վերլուծության և գնահատման համար հիմք են ընդունվել տվյալ ծրագրի առանձնահատկությունները: Ընդհանուր առմամբ, մոնիտորինգի և գնահատման ուսումնասիրությունների ընթացքում զուգորդվել են գրասենյակային և դաշտային

¹ ՏՀՀԿ-ն հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային անկախ կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2001 թվականին Երևանում: ՏՀՀԿ-ի և «Քաղաքականությունների բարելավմանն ուղղված երկխոսություն և քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնում» ծրագրի մասին մանրամասների համար այցելեք www.edrc.am:

աշխատանքները՝ ներառելով քանակական, որակական և խառը հետազոտական զանազան մեթոդներ, մասնավորապես.

- Վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություն,
- Քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրություն և քննություն,
- Հարակից ուսումնասիրությունների և փաստաթղթերի ուսումնասիրություն,
- Հիմնական տեղեկացված անձանց հետ հարցազրույցներ,
- Շահառուների և փորձագետների շրջանում ֆոկուս խմբային քննարկումներ,
- Ծառայություն մատուցողների ուսումնասիրություն և հարցազրույցներ,
- Մարդկային պատմությունների արձանագրում և ներկայացում,
- Վիճակագրական ընտրանքային հետազոտություններ:

2015-ի ընթացքում ուսումնասիրության առարկա են դարձել առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտների հետևյալ ծրագրերը.

- «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագիր: Սա ՀՀ պետական բյուջեի ամենամեծ և ամենակարևոր սոցիալական ծրագրերից մեկն է՝ ուղղված աղքատության կրճատմանը: Այս բյուջետային ծրագիրն ունի շուրջ 105 հազար շահառու ընտանիք՝ ընդգրկելով հանրապետության ողջ տարածքը: 2015-ին ծրագրի բյուջեն աճել է 8.3 տոկոսով և կազմել 38.4 միլիարդ դրամ:
- «Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում» (ներառյալ ՀՀ մարզերում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում) ծրագիրն ուղղված է ծեր և թոշակառու միայնակ տարեցներին տնային պայմաններում խնամքի ծառայությունների մատուցմանը: Այս բյուջետային ծրագիրը ներկայացվում է խմբավորված՝ ներառելով Երևանում և ՀՀ մարզերում մատուցվող ծառայությունները: Շահառուների ընդհանուր թվաքանակը կազմում է 5700 անձ, 2015 թվականի ընդհանուր բյուջեն կազմել է 330 միլիոն դրամ:
- «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրն առողջապահության ոլորտի պետական ծրագիր է: Այն նպատակ ունի բժշկական օգնություն և ծառայություններ մատուցել բնակչության սոցիալապես անապահով խմբերին՝ բժշկական օգնության և ծառայությունների բոլոր տեսակների համար, բացառությամբ կոսմետոլոգիական, օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման և ստոմատոլոգիական թանկարժեք ծառայությունների: Ծրագրի բյուջեն կազմում է 7.2 միլիարդ դրամ, շահառուների թվաքանակը մոտ 66 հազար մարդ/դեպք է:

«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» և «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» բյուջետային ծրագրերի գնահատման համար 2015 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ՏՀՀԿ-ն իրականացրել է տնային տնտեսությունների վիճակագրական ընտրանքային հետազոտություն (SSՀՀ-2015): Վերջինս հանդիսացել է նշված երկու բյուջետային ծրագրերի գնահատման համար տվյալների հիմնական (առաջնային) աղբյուրը:

SSՀՀ-2015-ը, միաժամանակ, ապահովել է նաև «Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում» ծրագրի գնահատման համար լրացուցիչ տվյալներ՝ թեև այս դեպքում տվյալների հավաքման հիմնական մեթոդը չի եղել:

SSՀՀ-2015-ի արդյունքները, թեև ուղղված են եղել նշված բյուջետային ծրագրերի գնահատմանը, այնուհանդերձ, դրանք լայն հնարավորություններ են ստեղծում հարակից վերլուծությունների իրականացման և քննարկումների համար:

1.3 Մեթոդաբանությունը

Տնային տնտեսությունների վիճակագրական ընտրանքային հետազոտության իրականացման գլխավոր նպատակն էր «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» և «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» պետական բյուջետային ծրագրերի գնահատման համար ստանալ առաջնային տվյալներ: «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի շահառուներն աղքատ տնային տնտեսություններն են, որոնք հաշվառված են Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում (30.00 և ավելի բարձր միավոր ունեցողներ):

«Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շահառուները նպաստառու տնային տնտեսություններն են և «հատուկ խմբերում ընդգրկվածները»: Մասնավորապես, նշված ծրագրի հիմնական շահառուները ևս Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում ընդգրկված և 30.00 և ավելի բարձր միավոր ունեցող անձիք են:

Հաշվի առնելով, որ այս երկու բյուջետային ծրագրերի շահառուները մեծամասամբ համընկնում են, հետազոտությունը պլանավորվել է այնպես, որ դաշտային աշխատանքները միավորվեն՝ կիրառելով միասնական հետազոտական գործիքներ: Այս հանգամանքը թույլ է տվել ունենալ ընտրանքի բավականին մեծ ծավալ՝ ապահովելով առավել վստահելի և ներկայացուցչականության բարձր մակարդակ ունեցող տվյալներ:

Բյուջետային ծրագրերի արդյունավետության և հասցեականության գնահատման տեսանկյունից կարևոր է բացահայտել ծրագրերում փաստացի ընդգրկվածների և չընդգրկվածների սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական առանձնահատկությունները, ինչպես նաև առանձնացնել ըստ բնակավայրերի տիպերի հնարավոր յուրահատկությունները: Հետևաբար, ՏՀՀԿ-2015-ի ընտրանքի պլանը ձևավորվել է այնպես, որ առավելագույնս ապահովվի տվյալների դիսագրեգացիա, բավարարի գնահատման չափորոշիչների և ցուցանիշների ստացմանը, ինչպես նաև տվյալներն ունենան սպասվող սխալի ընդունելի մակարդակ:

Այսպիսով, կիրառվել է ստրատիֆիկացված, բազմափուլ, պատահական ընտրանքի մոդել: Նախ առանձնացվել են 2 կլաստերներ՝ «Ընդհանուր բնակչություն» և «Թիրախային բնակչություն»: «Ընդհանուր բնակչությունը» ՀՀ բոլոր տնային տնտեսություններն են, իսկ «Թիրախային բնակչությունը»՝ Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված նպաստառու տնային տնտեսությունները²: Յուրաքանչյուր կլաստերում տարանջատվել են Երևան, այլ քաղաքներ և գյուղեր ստրատաները:

Ընտրանքի ընդհանուր ծավալը կլաստերներում սահմանվել է հավասար: Յուրաքանչյուր ստրատայում ընտրանքի ծավալը որոշվել է՝ հիմք ընդունելով գլխավոր համակցության մեջ դրանց համամասնական կշիռները, իսկ յուրաքանչյուր ստրատայի ներսում՝ գլխավոր համակցության մարզային համամասնությունները:

Աղյուսակ 1. ՏՀՀԿ-2015-ի գլխավոր համակցության ստրատիֆիկացիան

Կլաստերներ	Ստրատաներ	ՏՏ քանակ	Բաշխում
Կլաստեր 1. «Ընդհանուր բնակչություն»	1.1 Երևան	285,097	0.3734
	1.2 Այլ քաղաքներ	225,917	0.2959
	1.3 Գյուղեր	252,440	0.3307
Ընդամենը		763,454	1.0000

² Տեքստում տնային տնտեսություն և ընտանիք հասկացությունները օգտագործվում են նույն իմաստով:

Կլաստեր 2.	2.1 Երևան	17,056	0.1601
«Թիրախային բնակչություն»	2.2 Այլ քաղաքներ	46,328	0.4350
	2.3 Գյուղեր	43,117	0.4049
Ընդամենը		106,501	1.0000

«Ընդհանուր բնակչության» համար գլխավոր համամասնության տարանջատման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԱԿԾ տվյալները, իսկ «Թիրախային բնակչության» համար՝ ՀՀ ԱՍՀՆ կողմից տրամադրված Նպաստառուների ամփոփ տվյալները:

Ընտրանքի նպատակային ծավալը յուրաքանչյուր կլաստերում կազմել է 2300 ՏՏ: Աղյուսակ 2-ում բերվում են ընտրանքային համակցությունը և սպասվող սխալի գնահատականները՝ յուրաքանչյուր ստրատայի համար: Ընտրանքի սխալի առավելագույն մեծությունը կլաստեր 2-ի 1-ին ստրատայում է՝ «Երևան» և կազմում է +/- 4.9 տոկոս, որը գտնվում է ընդունելի սահմաններում: Մյուս բոլոր ստրատայներում սպասվող սխալը շատ փոքր է՝ մինչև +/-4 տոկոս:

Աղյուսակ 2. ՏՏՀՀ-2015-ի ընտրանքային համակցությունը և սպասվող սխալը

Կլաստերներ	Ստրատայներ	Ճշգրտված բաշխում	Ընտրանք, ՏՏ	Ընտրանքի բաշխում	Սպասվող սխալ, %
Կլաստեր 1. «Ընդհանուր բնակչություն»	1.1 Երևան	0.37	852	0.37	+/-3.4
	1.2 Այլ քաղաքներ	0.30	690	0.30	+/-3.7
	1.3 Գյուղեր	0.33	758	0.33	+/-3.6
Ընդամենը		1.00	2,300	1.00	+/-2.0
Կլաստեր 2. «Թիրախային բնակչություն»	2.1 Երևան	0.16	400	0.17	+/-4.9
	2.2 Այլ քաղաքներ	0.44	980	0.43	+/-3.1
	2.3 Գյուղեր	0.40	920	0.40	+/-3.2
Ընդամենը		1.00	2,300	1.00	+/-2.0

Բնակավայրերի և ՏՏ-ների ընտրությունը տեղի է ունեցել պատահական թվերի մեթոդով՝ հիմք ընդունելով բնակավայրի նախնական հավանականության կշիռները և ընտրանքի առաջնային միավորում ընտրանքի նվազագույն ծավալը: Արդյունքում, ի լրումն Երևան քաղաքի, հետազոտությանը մասնակցել են 24 քաղաքային և 85 գյուղական համայնքներ:

Աղյուսակ 3. ՏՏՀՀ-2015 հետազոտությունում ընդգրկված բնակավայրերի քանակն ըստ մարզերի

	Բնակավայրերի քանակը	
	Քաղաք	Գյուղ
Արագածոտն	2	8
Արարատ	3	13
Արմավիր	3	10
Գեղարքունիք	3	15
Լոռի	3	12
Կոտայք	3	7
Շիրակ	2	8
Սյունիք	2	3
Վայոց Ձոր	1	3
Տավուշ	2	6
Ընդամենը	24	85

Հետազոտության դաշտային աշխատանքներն անցկացվել են 2015 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին: Հետազոտությունն իրականացվել է հարցաթերթի հիման վրա տնային տնտեսություններում դեմ-առ-դեմ հարցման միջոցով:

Հարցումները չեն կայացել Նպաստառուների առաջնային հասցեների 18.4 տոկոս դեպքերում: Արդյունքում, ընտրանքի նպատակային ցուցանիշն ապահովելու համար հասցեները փոխարինվել են ռեզերվային՝ հայելանման ընտրված ցանկից: Հարցումների չկայացման հիմնական պատճառը «փակ դռներն» են, ինչպես նաև մերժումները: Նպաստառուների շրջանում հարցումների չկայացման հիմնական պատճառներից է նաև սխալ կամ ոչ բնակելի տների հասցեները:

1.4 Զեկույցի նպատակը և կառուցվածքը

Սույն փաստաթուղթը ներկայացնում է 2015 թվականին ՏՁՀԿ կողմից իրականացված տնային տնտեսությունների վիճակագրական ընտրանքային հետազոտության (SSԸՀ-2015) արդյունքները:

Զեկույցում ամփոփվում են Հայաստանի ՏՏ-ների և Նպաստառու ՏՏ-ների սոցիալական պատկերը և կատարվում համադրումներ: Բերվող տվյալները և համադրումները կարող են հարակից վերլուծությունների և քննարկումների առարկա դառնալ:

Զեկույցը բաղկացած է 6 բաժիններից: Ներածությանը հաջորդում է բաժին 2-ը, որում ներկայացվում են հիմնական ժողովրդագրական պատկերը, կրթության մակարդակը, սոցիալական կարգավիճակը, ինչպես նաև՝ միգրացիայի հակվածությունը: 3-րդ բաժնում ներկայացվում են բնակչության կենցաղային պայմանները՝ անդրադառնալով բնակարանային պայմաններին, ջեռուցմանը, երկարաժամկետ օգտագործման ապրանքների և կենցաղային տեխնիկայի օգտագործմանը:

Հաջորդ բաժնում վերլուծվում են բնակչության եկամուտները և ծախսերը, մասնավորապես կենտրոնանալով սննդամթերքի սպառման վրա: Ներկայացվում են նաև կոմունալ ծախսերը, ՏՏ-ների ֆինանսական դիրքը և պարտքի կառուցվածքը:

Բաժին 5-ը նվիրված է կենսամակարդակի գնահատականներին: Մասնավորապես, ներկայացվում է ՏՁՀԿ կողմից աղքատության գնահատականները, համադրվում են ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկվածների աղքատության ցուցանիշները:

6-րդ բաժնում ներկայացվում է առողջապահական պատկերը՝ բնակչության առողջության վիճակը, դիմելիությունը բժշկին կամ բժշկական հաստատություններ, վճարումները և այլն՝ առանձնացված Նպաստառու և ոչ նպաստառու բնակչության համար:

Վերջին՝ 7-րդ բաժնում ամփոփվում են հիմնական արդյունքները և եզրակացությունները:


2. ՏՏ-ների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները

2.1 Սեռատարիքային կառուցվածքը

ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն՝ 2015 թվականի տարեսկզբին ՀՀ մշտական բնակչությունը կազմել է 3,011 հազ. մարդ, որի 35.6 տոկոսը բնակվել է Երևան քաղաքում, 27.9 տոկոսը՝ այլ քաղաքներում և 36.5 տոկոսը՝ գյուղերում: Բնակչության 52.2 տոկոսը կազմել են կանայք, իսկ 47.8 տոկոսը՝ տղամարդիկ:

Համաձայն ՏՏՀՀ-2015 արդյունքների, Հայաստանի բնակչության 33.1 տոկոսը բնակվել է Երևան քաղաքում, 28.6 տոկոսը՝ այլ քաղաքներում, իսկ 38.2 տոկոսը՝ գյուղերում: Կանայք կազմել են բնակչության 52.9, իսկ տղամարդիկ՝ 47.1 տոկոսը:

Գծապատկեր 1. Բնակչության կառուցվածքը. ՀՀ ԱՎԾ և ՏՏՀՀ-2015 տվյալների համադրում




Նշում. ներսի շրջանում ՏՀՀԿ ՏՏՀՀ-2015 հետազոտության տվյալներն են, իսկ արտաքին շրջանում՝ ՀՀ ԱՎԾ

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է ՀՀ մշտական բնակչության տարիքային կառուցվածքը՝ ըստ ՀՀ ԱՎԾ և ըստ ՏՏՀՀ-2015 տվյալների:

Աշխատունակ տարիքի բնակչությունը (16-62 տարեկաններ) կազմում է հանրապետության բնակչության՝ համապատասխանաբար 66.9 և 65.3 տոկոսը: Մինչև 16 տարեկանանձանց կշիռները երկու աղբյուրներում հավասար են՝ 20.5 տոկոս, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչությունը կազմում է մշտական բնակչության համապատասխանաբար 12.6 և 14.1 տոկոսը:

Այսպիսով, ՏՏՀՀ-2015 տվյալները հիմնական ժողովրդագրական ցուցանիշների գծով համընկնում են ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հետ՝ ինչը խոսում է հետազոտության տվյալների բարձր արժանահավատության մասին:

Գծապատկեր 2. Բնակչության տարիքային բուրգը. ՀՀ ԱՎԾ և ՏՀՀԿ-2015 տվյալների համադրում




Նշում. ներքի շրջանում ՏՀՀԿ ՏՀՀԿ-2015 հետազոտության տվյալներն են, իսկ արտաքին շրջանում՝ ՀՀ ԱՎԾ

Հայաստանի ՏՏ-ների 36.9 տոկոսը բնակվում է Երևան քաղաքում, 30.3 տոկոսը՝ այլ քաղաքներում և 32.8 տոկոսը՝ գյուղերում: ՏՏ-ի 14 տոկոսը կամ շուրջ 104.7 հազար ընտանիք ստանում են ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ³:

Նպաստառու ՏՏ-ները համեմատաբար ավելի շատ են այլ քաղաքներում և գյուղերում: Թեև այլ քաղաքներում բնակվում է հանրապետության ՏՏ-ների փոքր մասը, սակայն սրանց կազմում նպաստառու ՏՏ-ները գերակշռում են և կազմում են ընդամենը նպաստառուների 42.5 տոկոսը: Երևանաբնակ են նպաստառու ՏՏ-ների ընդամենը 17.4 տոկոսը:


Գծապատկեր 3. ՏՏ-ների բաշխումը ըստ բնակավայրերի, տոկոս



Նպաստառու ՏՏ-ների բաշխումը շեղվում է նաև ՏՏ-ների մարզային բաշխումից: Նպաստառուների կառուցվածքում ամենից մեծը Լոռու մարզի ՏՏ-ների ընդգրկումն է. նրանք կազմում են նպաստառու ՏՏ-ների 18.9 տոկոսը: Հաջորդ դիրքերում են Շիրակի և Գեղարքունիքի մարզերը՝ համապատասխանաբար 14.2 և 12.5 տոկոս կշիռներով (գծապատկեր 4):

³ Նախկինում՝ աղքատության ընտանեկան նպաստներ:


Գծապատկեր 4. ՏՏ-ների բաշխումը ըստ մարզերի, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Ստորև ներկայացված է նպաստառու ՏՏ-ների տարիքային կառուցվածքը: Նպաստառուների կառուցվածքում ամենամեծ ընդգրկումը՝ 38 տոկոս, ունեն 0-15 տարեկանները: Նրանց հաջորդում են 31-45 տարեկանները՝ 24.9 տոկոս համամասնությամբ: Այս տարիքային խմբի մեծ ընդգրկումը պայմանավորված է երեխաների ընդգրկման մեծ մակարդակով, քանի որ հենց այս տարիքային խմբին են գերազանցապես պատկանում 0-15 տարեկան երեխաների ծնողները: Մեծահասակների դեպքում հակառակ պատկերն է. թեև 63 տարեկանից բարձր բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 14 տոկոսը, սակայն նրանց կշիռը նպաստառուների կազմում 9 տոկոս է:

Գծապատկեր 5. Բնակչության տարիքային կառուցվածքը, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

ՏՏ-ների միջին տարիքը կազմում է 36.6 տարի: Երևանաբնակ ՏՏ-ները, հանրապետական միջինի համեմատ, ավելի մեծահասակ են. այստեղ ՏՏ-ների միջին տարիքը կազմում է 39.3 տարի: Մյուս քաղաքներում և գյուղերում ՏՏ-ներն ավելի երիտասարդ են: Նպաստառու ՏՏ-ներն իրենց հերթին ավելի երիտասարդ են. նրանց միջին տարիքը կազմում է 28.9 տարի՝ հանրապետական 36.6-ի դիմաց: Այս դեպքում ևս, ոչ երևանաբնակներն ավելի երիտասարդ են:

ՏՏ-ների միջին մեծությունը (անդամների թվաքանակը) կազմում է 4.2 մարդ: Նպաստառու ՏՏ-ներն ավելի մեծ են. դրանց անդամների միջին թվաքանակը կազմում է 4.9 մարդ: Նպաստառու ՏՏ-ներն առավել մեծ են գյուղերում՝ 5.6 մարդ, իսկ Երևանում և մյուս քաղաքներում կազմում են 4.4 մարդ:


Գծապատկեր 6. SS-ների անդամների միջին քանակը և տարիքը



Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Նպաստառու SS-ները, հանրապետական միջինի համեմատ, ավելի երիտասարդ են, բացառությամբ 1 անդամ ունեցող SS-ների, որոնց միջին տարիքը կազմում է 68.2 տարի: Ամենաերիտասարդ Նպաստառու ընտանիքները 4 անդամից բաղկացած SS-ներն են:


Գծապատկեր 7. SS անդամների միջին տարիքն ըստ անդամների քանակի, տարի



Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Նպաստառուների կառուցվածքում գերակշռում են 4 նաև 5 անդամ ունեցող SS-ները, որոնք միասին կշռում են Նպաստառուների 47.2 տոկոսը: Մինչև 3 անդամ ունեցող SS-ների ընդգրկվածությունը համակարգում ավելի փոքր է:


Գծապատկեր 8. SS-ների բաշխումն ըստ անդամների քանակի



Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Կանայք մի փոքր գերակշռում են Նպաստառու SS-ներում: Նպաստառուների 54 տոկոսը կանայք են՝ հանրապետական 52.9 տոկոս ցուցանիշի դիմաց:

Գծապատկեր 9. Բնակչության գենդերային կառուցվածքը, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Նպաստառուների կազմում բավականին մեծ են կին գլխավորով և միայն կանանցից ու երեխաներից բաղկացած SS-ները՝ համապատասխանաբար 38.4 և 15.7 տոկոս: Համապատասխան հանրապետական ցուցանիշները կազմում են 30.1 և 12.8 տոկոս: Նման SS-ներն առանձնանում են անդամների փոքրաթիվ լինելով: Միայն կանանցից և երեխաներից բաղկացած SS-ների անդամների միջին թվաքանակը կազմում է 1.6 մարդ, իսկ Նպաստառուների դեպքում՝ 2.7 մարդ:

Հանրապետության բոլոր SS-ների 48.4 տոկոսում կան երեխաներ, իսկ Նպաստառու SS-ների՝ ավելի քան 87 տոկոսում: Եթե Նպաստառուների կազմում 1 երեխա ունեցողների կշիռը մոտ է հանրապետական միջինին (բոլոր SS-ների մոտ 20 տոկոսը, իսկ Նպաստառուների՝ 21 տոկոսը), ապա երկու և ավելի երեխաներ ունեցողների քանակը Նպաստառուների կազմում բավականին շատ է: Նպաստառու SS-ների կառուցվածքում, մասնավորապես, գերակշռում են երկու երեխա ունեցողները՝ 41.5 տոկոս (հանրապետական՝ 21 տոկոս): Երեք երեխա ունեն Նպաստառուների 19.4 տոկոսը՝ միջին հանրապետական 5.6 տոկոս ցուցանիշի դիմաց:

Գծապատկեր 10. SS-ների կառուցվածքը ըստ երեխաների քանակի, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Արդյունքում, թեև Հայաստանի բնակչության 20.5 տոկոսն են կազմում երեխաները, սակայն Նպաստառու բնակչության կազմում երեխաները կազմում են մոտ 38 տոկոս: Նպաստառու բնակչության կազմում մոտ 30 տոկոսը մինչև 62 տարեկան չափահաս կանայք են, իսկ 23 տոկոսը՝

տղամարդիկ: 63 և ավելի բարձր տարիքի անձանց շրջանում ևս մեծ է Նպաստառու կանանց բաժինը:

Գծապատկեր 11. Բնակչություն սեռատարիքային կառուցվածքը, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

2.2 Կրթական մակարդակը

Նպաստառուների կրթական մակարդակը միջին հաշվով ցածր է հանրապետական միջինի համեմատ: Նպաստառուների կազմում համեմատաբար փոքր է բարձրագույն կամ անավարտ բարձրագույն կրթություն⁴ ունեցողների կշիռը՝ 10.1 տոկոս, այն դեպքում, երբ հանրապետական ցուցանիշը 26.5 տոկոս է: Մյուս կողմից Նպաստառուների կազմում շատ են թերի միջնակարգ և միջնակարգ կրթություն ունեցողները՝ 72.2 տոկոս՝ հանրապետական 67.1 տոկոս ցուցանիշի դիմաց:

Նպաստառու SS-ներում, հանրապետության միջինի համեմատ, ցածր է հատկապես տղամարդկանց կրթական մակարդակը: Բարձրագույն կրթություն ունեն Նպաստառու կանանց 8.9 տոկոսը և տղամարդկանց 5.8 տոկոսը, այն դեպքում, երբ բարձրագույն կրթություն ունեն հանրապետության կանանց 22 տոկոսը, իսկ տղամարդկանց՝ 21 տոկոսը:

Աղյուսակ 4. Բնակչության կրթական մակարդակը, տոկոս

	Բոլոր SS-ներ			Նպաստառու SS-ներ		
	Կին	Տղամարդ	Ընդամենը	Կին	Տղամարդ	Ընդամենը
Տարրական	1.3	0.8	1.1	1.0	0.8	0.9
Թերի միջնակարգ	7.3	7.7	7.5	10.3	15.2	12.3
Միջնակարգ	42.7	47.8	45.0	56.8	62.0	59.0
Միջին մասնագիտական	21.7	17.8	19.9	19.9	14.5	17.6
Անավարտ բարձրագույն	5.5	5.3	5.4	3.1	1.8	2.5
Բարձրագույն	21.6	20.6	21.1	8.9	5.8	7.6
16+ բնակչություն	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

⁴ Սովորում է ԲՈՒՀ-ի երրորդ և ավելի բարձր կուրսերում կամ կրթությունն ավարտել է այդ ընթացքում:

2.3 Սոցիալական կազմը. գործազուրկներ, ծերեր և հաշմանդամներ

Հանրապետության SS-ների ավելի քան 30 տոկոսում կան գործազուրկներ: Նպաստառու SS-ների դեպքում գործազուրկ ունեցողների քանակն ավելի մեծ է: Գործազուրկներ կան Նպաստառու SS-ների 48 տոկոսում: Ընդ որում, Նպաստառու SS-ների մոտ 30 տոկոսում կա 1, իսկ 14.3 տոկոսում՝ 2 գործազուրկ:

Գործազուրկ ունեցող Նպաստառու SS-ները գերակշռում են քաղաքներում, սակայն 2 և ավելի գործազուրկները գերակշռում են գյուղաբնակ SS-ներում:

Աղյուսակ 5. SS-ների կառուցվածքը ըստ գործազուրկների քանակի, տոկոս


	Բոլոր SS-ներ				Նպաստառու SS-ներ			
	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդամենը
Գործազուրկներ չկան	65.6	65.3	69.5	66.8	48.8	55.4	49.8	52.0
1 գործազուրկ	22.4	22.3	17.2	20.7	29.8	29.9	27.3	28.8
2 գործազուրկ	9.4	8.6	7.7	8.6	16.5	10.4	17.5	14.3
3 գործազուրկ	1.9	2.6	4.0	2.8	3.3	3.3	3.2	3.3
4 և ավելի գործազուրկ	0.7	1.1	1.6	1.1	1.8	1.0	2.2	1.6
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Հայաստանում գործազուրկները քիչ են կին ղեկավարով SS-ներում, նրանց միայն 28.8 տոկոսում կան գործազուրկներ ի համեմատ տղամարդ ղեկավարով SS-ների՝ 35 տոկոսի: Նպաստառու SS-ների դեպքում այս ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 45.6 և 49.5 տոկոս:

Հայաստանում գործազուրկների կառուցվածքում ընդհանուր առմամբ մեծ է 16-30 տարեկանների կշիռը՝ 38.6 տոկոս: Հաջորդ խոշոր խումբը 31-45 տարեկաններն են՝ 36.7 տոկոս: Նպաստառու SS-ների դեպքում գործազուրկները տարիքով ավելի մեծ են: Նրանց կազմում գերակշռում են 31-45 տարեկանները՝ 55 տոկոս:

Գծապատկեր 12. Գործազուրկների տարիքային կառուցվածքը, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Նպաստառու SS-ների 36 տոկոսում կան ծերեր, որը բավականաչափ ցածր է հանրապետական ցուցանիշից՝ 47 տոկոս: SS-ներում ծերերի քանակի և Նպաստառուների համակարգում SS ընդգրկման հնարավորության միջև նկատելի է հակադարձ կապ:

Կին գլխավորով SS-ների 62.2 տոկոսում կա առնվազն մեկ ծեր, այն դեպքում, երբ տղամարդ ղեկավարով SS-ների միայն 40.2 տոկոսում կան ծերեր: Արդյունքում՝ կին ղեկավարով SS-ներն ավելի մեծահասակ են:


Գծապատկեր 13. ՏՏ-ների կառուցվածքը՝ ըստ ծերերի քանակի, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՁՀԿ

Հաշմանդամներ կան Հայաստանի ՏՏ-ների 24 տոկոսում, իսկ Նպաստառու ՏՏ-ների՝ 28 տոկոսում: Մեկ հաշմանդամ կա բոլոր ՏՏ-ների 20 , իսկ Նպաստառուների՝ 23.6 տոկոսում:

Գծապատկեր 14. ՏՏ-ների քանակը՝ ըստ հաշմանդամների քանակի, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՁՀԿ

2.4 Միգրացիա և միգրացիայի հակվածություն

Ուշագրավ է, որ միգրանտ ունեցող ՏՏ-ներն ավելի շատ են Նպաստառուների կազմում: Բոլոր ՏՏ-ների 16.3 տոկոսում կան միգրանտներ, իսկ Նպաստառու ՏՏ-ների՝ 18.2 տոկոսում: Սակայն, մեկից ավելի միգրանտներ ունեցող ՏՏ-ները Նպաստառուների շրջանում ավելի քիչ են՝ ընդամենը 1.5 տոկոս: Արդյունքում, հանրապետության բնակչության 5.3 տոկոսը միգրանտ է: Նպաստառու բնակչության դեպքում միգրանտները կազմում են 4.1 տոկոս:

Աղյուսակ 6. ՏՏ-ների կառուցվածքը ըստ միգրանտների քանակի, տոկոս

	Բոլոր ՏՏ-ներ				Նպաստառու ՏՏ-ներ			
	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը
Միգրանտներ չկան	90.8	76.9	82.2	83.7	94.5	79.0	79.3	81.8
1 միգրանտ	7.8	14.3	14.9	12.1	4.8	19.0	19.2	16.6
2 և ավելի	1.4	8.8	2.9	4.3	0.8	1.9	1.4	1.5
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՁՀԿ


Միգրանտների թիվը փոքր է կին ղեկավարով ՏՏ-ներում։ Միգրանտներ կան նման բոլոր ՏՏ-ների 9.8 տոկոսում և Նպաստառու ՏՏ-ների՝ 11.1 տոկոսում։

Ստորև ներկայացվում են միգրացիայի հակվածության վերաբերյալ որոշ տվյալներ՝ համաձայն ՏՏ-ների գնահատականների։ Մասնավորապես, կայուն և մշտական աշխատանքի առկայության դեպքում ՏՏ-ների 24.2 տոկոսը գտնում է, որ կտեղափոխվի մշտական բնակության Ռուսաստան կամ ռուսալեզու այլ երկրներ, 17.7 տոկոսը՝ Եվրոպա, իսկ 14.9 տոկոսը՝ ԱՄՆ։

Արդյունքում ՏՏ-ների 36 տոկոսը պատրաստ է մշտական աշխատանքի հնարավորության դեպքում տեղափոխվել բնակության արտերկիր։ Նպաստառուների դեպքում, միգրացիայի հակվածությունն ունեցողների կշիռը մի փոքր ավելի մեծ է՝ 39 տոկոս։ Ընդ որում, բոլոր ՏՏ-ների 21 և Նպաստառուների 28 տոկոսն ունի միգրացիայի ուղղության (արտերկրի) հստակ նախընտրություն։

ՏՏ-ների 13 տոկոսը և Նպաստառու ՏՏ-ների 19 տոկոսը նշել է, որ կտեղափոխվի մշտական բնակության միայն Ռուսաստան կամ ռուսալեզու երկրներ։ Սրանց մեջ համեմատաբար քիչ են երևանաբնակները։ Վերջիններս առավելապես հակված են դեպի ԱՄՆ և դեպի Եվրոպա ուղղություններին։ ՏՏ-ների 5-6 տոկոսը պատրաստ են տեղափոխվել մշտական բնակության միայն Եվրոպա, իսկ 3 տոկոսը՝ միայն ԱՄՆ։ Այս ուղղություններով նախընտրությունը փոքր է գյուղաբնակ ՏՏ-ների շրջանում։

Գծապատկեր 15. Միգրացիայի նախընտրելի ուղղությունները, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ


Աղյուսակ 7. Միգրացիայի նախընտրելի ուղղությունները, ըստ բնակավայրի տեսակի, տոկոս

	ՏՏ-ներ				Նպաստառու ՏՏ-ներ			
	Երևան	Գյումրի	Քաղաք	Ընդամենը	Երևան	Գյումրի	Քաղաք	Ընդամենը
Որևէ երկիր	33	35	40	36	33	39	42	39
Միայն ՌԴ*	6	17	18	13	7	23	20	19
Միայն ԵՄ	5	3	5	5	9	4	7	6
Միայն ԱՄՆ	5	1	4	3	7	2	3	3
Ոչ մի երկիր	62	63	58	61	64	58	55	58
ԴՊ	5	2	2	3	4	3	2	3
Ոչ ՌԴ	17	6	11	12	19	7	11	11
Ոչ ԵՄ	13	19	22	18	15	25	25	23

*Ռուսաստան և ռուսալեզու այլ երկրներ
Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Նկատենք, որ մշտական, կայուն և օրինական աշխատանքի հեռանկարը որևէ դեպքում չի ստիպի Հայաստանի SS-ների 61 տոկոսին և Նպաստառու SS-ների 58 տոկոսին տեղափոխվել բնակության արտերկիր:

Գծապատկեր 16. Միգրացիայի հակում չունեցող SS-ներն ըստ բնակավայրերի, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Աղյուսակ 8-ում ներկայացված են միգրացիոն հակվածություն ունեցող SS-ների համար ակնկալվող միջին ամսական ընտանեկան եկամուտի գնահատականները, որի առկայության պարագայում պատրաստ են փոխել մշտական բնակության երկիրը: Միջինում SS-ներն ակնկալում են ամսական մոտ 4,250 ԱՄՆ դոլար: Նպաստառուների ակնկալիքներն ավելի ցածր են՝ մոտ 3,300 ԱՄՆ դոլար:

Միջին ամսական եկամուտի ակնկալիքները Ռուսաստան և ռուսալեզու երկրները նախընտրողների համար միջինում 30-50 տոկոսով փոքր են ԵՄ երկրները նախընտրողների և մոտ 2 անգամ՝ ԱՄՆ-ը նախընտրողների համեմատ:

Աղյուսակ 8. Արտերկիր մշտական բնակության տեղափոխման դեպքում ակնկալվող միջին ամսական եկամուտի գնահատականները, մեկ SS համար, ԱՄՆ դոլար

	Բոլոր SS-ներ				Նպաստառու SS-ներ			
	Երևան	Գյումրի	Քաղաք	Ընդամենը	Երևան	Գյումրի	Քաղաք	Ընդամենը
Միայն ՌԴ*	5,413	3,092	2,833	3,348	3,712	2,676	2,440	2,632
Միայն ԵՄ	4,864	4,633	3,324	4,296	3,445	5,541	3,609	4,069
Միայն ԱՄՆ	7,737	4,000	5,821	6,608	5,482	8,778	4,143	5,777
Որևէ երկիր	5,589	3,608	3,539	4,254	4,207	3,396	2,928	3,296

*Ռուսաստան և ռուսալեզու այլ երկրներ
Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

3. Կենցաղային պայմանները

3.1 Բնակարանային պայմաններ

SS-ների գրեթե կեսը՝ 49.7 տոկոսը, բնակվում է առանձնատներում, 46.7 տոկոսը՝ բազմաբնակարան շենքերում և 3.6 տոկոսը՝ այլ կացարաններում: Ակնհայտ է, որ Երևանում շատ են բազմաբնակարան շենքերում բնակվող SS-ները, իսկ գյուղերում անհամեմատ շատ են առանձնատներում բնակվողները:


Աղյուսակ 9. SS-ների բաշխումն ըստ բնակավայրերի և տան տեսակի, տոկոս

	Բոլոր SS-ներ				Նպաստառու SS-ներ			
	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը
Առանձնատուն	23.5	93.4	27.8	49.7	26.5	90.5	32.1	54.6
Բնակարան բազմաբնակարան շենքում	73.9	4.5	65.9	46.7	70.0	4.5	60.9	39.9
Վթարային (3-րդ կամ 4-րդ աստիճանի) բնակարան	1.6	0.0	0.3	0.7	2.5	0.2	0.4	0.7
Հանրակացարանի սենյակ	0.2	0.0	0.0	0.1	0.5	0.4	0.4	0.4
Աղետի հետևանքով տրամադրված տնակ	0.0	0.8	5.2	1.8	0.0	2.8	3.9	2.8
Ոչ հիմնական (ժամանակավոր) շինություն	0.7	1.3	0.9	1.0	0.5	1.5	2.2	1.7
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100

Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

SS-ների հիմնական մասը՝ ավելի քան 91 տոկոսը, բնակվում է սեփական տանը, վարձով է բնակվում նրանց 5.5 տոկոսը, իսկ 3.4 տոկոսը բնակվում է ոչ իր բնակարանում, սակայն առանց վարձի: Նպաստառու SS-ների մոտ վերջին խումբը բավականաչափ մեծ է՝ 9.4 տոկոս: Նպաստառուների միայն 84.2 տոկոսն է բնակվում սեփական տանը:


Գծապատկեր 17. SS-ների կառուցվածքը ըստ բնակատեղի նկատմամբ սեփականության իրավունքի, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Մեկ շնչի համար բնակատեղի միջին մակերեսը հանրապետությունում կազմում է 23.7 մ²: Նպաստառու SS-ների դեպքում դա կազմում է 17.7 մ²: Բնակատեղի միջին մակերեսը տարբերվում է և՛ ըստ բնակավայրերի, և՛ ըստ տների տեսակների: Մեկ շնչի հաշվով միջին մակերեսը մեծ է գյուղերում և փոքր է Երևանում: Նպաստառու SS-ների դեպքում մակերեսը միջինում զիջում է համապատասխան ցուցանիշները, բացառություն են կազմում միայն 3-րդ և 4-րդ աստիճանի վթարային բնակարանները:

Գծապատկեր 18. Մեկ շնչի հաշվով մակերեսն ըստ տան տեսակի, մ²



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Հանրապետության ՏՏ-ների մոտ 2 տոկոսն իրականացրել է անշարժ գույքի գնման, իսկ 1.2 տոկոսը՝ վաճառքի գործառնություններ: Նպաստառու ՏՏ-ների դեպքում գերազանցում են վաճառքի գործարքները: Անշարժ գույքի գնման գործարքներ են իրականացրել Նպաստառու ՏՏ-ների ընդամենը 0.3 տոկոսը, իսկ վաճառքի՝ 0.6 տոկոսը:

3.2 Զեռուցում

Հայաստանում ՏՏ-ները ջեռուցման համար հիմնականում օգտագործում են բնական գազ, որին հաջորդում է վառելիափայտը: Համաձայն հետազոտության արդյունքների՝ 2014-2015 թվականների ջեռուցման սեզոնին ՏՏ-ների գրեթե կեսը ջեռուցման համար կիրառել է բնական գազ: Զեռուցման նպատակներով էլեկտրաէներգիա է օգտագործել ՏՏ-ների մոտ 12 տոկոսը: Վառելիափայտ է օգտագործել ՏՏ-ների 30.5 տոկոսը:

Նպաստառու ՏՏ-ների կառուցվածքում ավելի մեծ է վառելիափայտ օգտագործողների կշիռը՝ 40 տոկոս, և փոքր բնական գազ օգտագործողներին՝ 33.6 տոկոս: Նպաստառուների մոտ 6 տոկոսը տունը ջեռուցում է հավաքած վառելիքով, իսկ մոտ 5 տոկոսը՝ աթարով: Նկատենք նաև, որ հանրապետության ՏՏ-ների մոտ 2 տոկոսը բնակարանը ձմեռվա ընթացքում հիմնականում չի ջեռուցել:

Աղյուսակ 10. Զեռուցման համար կիրառվող տարբերակները (էներգիայի աղբյուրը), տոկոս

	Բոլոր ՏՏ-ներ				Նպաստառու ՏՏ-ներ			
	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը
Էլեկտրաէներգիա	25.5	1.1	14.8	11.9	32.3	1.1	16.4	13.0
Բնական գազ	65.1	13.0	58.0	49.3	49.8	7.1	51.9	33.6
Վառելիափայտ	4.5	68.4	21.2	30.5	6.3	70.6	24.9	40.0
Հավաքված վառելիք	1.2	6.6	1.7	2.1	6.0	9.5	4.5	5.8
Բիովառելիք, աթար	0.0	9.8	0.3	3.3	0.0	11.3	0.8	4.9
Հիմնականում չի ջեռուցվել	2.8	0.8	2.6	2.1	4.5	0.2	1.0	2.3
Այլ	0.9	0.3	1.4	0.9	1.3	0.2	0.4	0.5
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100

Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

SS-ների մեծամասնությունը ջեռուցման համար կիրառում են նաև երկրորդային տարբերակներ (էներգիայի աղբյուրներ): Ջեռուցման լրացուցիչ աղբյուրների կառուցվածքում մեծ է բիոկառելիքի (աթարի) մասնաբաժինը՝ SS-ների ավելի քան 5 տոկոսը:

3.3 Կենցաղային տեխնիկա և կոմունիկացիաներ

Հայաստանում մարդատար ավտոմեքենաներ կան և օգտագործվում են SS-ների 33.8 տոկոսի կողմից: Նպաստառու SS-ների դեպքում ավտոմեքենայի առկայությունը սահմանափակում է համակարգում ընդգրկվելը: Այնուհանդերձ, ըստ հետազոտության արդյունքների, հետազոտված Նպաստառու SS-ների 8.3 տոկոսն ունեն և օգտագործում են մարդատար ավտոմեքենաներ:

Ամենատարածված կենցաղային տեխնիկան հեռուստացույցը և սառնարանն են: Հեռուստացույցներ կան գրեթե բոլոր SS-ներում: Սառնարաններ օգտագործում են բոլոր SS-ների 92.4, իսկ Նպաստառու SS-ների՝ 86.8 տոկոսը:

Ավտոմատ լվացքի մեքենաներ օգտագործում են հանրապետության SS-ների մոտ 74 տոկոսը: Նպաստառուների շրջանում դրա օգտագործումը համեմատաբար ավելի փոքր է՝ 61.3 տոկոս: Նպաստառուների կողմից հատկապես փոքր է փոշեկուլների օգտագործումը: Փոշեկուլ օգտագործում են բոլոր SS-ների մոտ 62 տոկոսը, իսկ Նպաստառուների՝ 43 տոկոսը: Օդորակիչներ կան Հայաստանի բոլոր SS-ների 4.6, իսկ Նպաստառու SS-ների մոտ 1 տոկոսում:

Բջջային հեռախոսի օգտագործումը խիստ տարածված է և, ըստ էության, չի տարբերվում Նպաստառու և ոչ Նպաստառու SS-ների համար:

Համակարգիչներ օգտագործում են Հայաստանի SS-ների մոտ 63 տոկոսը: Դա ավելի քան 8 տոկոսային կետով ցածր է Նպաստառու SS-ների դեպքում՝ 54 տոկոս:

Աղյուսակ 11. Հիմնական կենցաղային և այլ ապրանքների օգտագործումը SS-ներում, տոկոս

	Բոլոր SS-ներ				Նպաստառու SS-ներ			
	Երևան	Գյուլ	Քաղաք	Ընդամենը	Երևան	Գյուլ	Քաղաք	Ընդամենը
Սառնարան	95.3	90.5	91.1	92.4	88.0	84.6	88.3	86.8
Ավտոմատ լվացքի մեքենա	84.2	62.6	72.8	73.7	77.3	47.2	68.1	61.3
Փոշեկուլ	72.0	50.7	61.6	61.9	45.8	31.8	52.8	43.1
Բջջային հեռախոս	98.6	97.6	96.1	98.7	96.3	99.6	96.5	97.7
Համակարգիչ	67.1	55.4	65.6	62.8	53.0	48.1	60.9	54.4
Օդորակիչ	8.2	2.1	2.9	4.6	2.5	0.6	0.8	1.0
Մարդատար ավտոմեքենա	27.1	43.8	31.2	33.8	4.3	11.5	7.0	8.3

Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Հայաստանի բոլոր SS-ների 67 տոկոսը և Նպաստառու SS-ների 59 տոկոսն օգտվում են ինտերնետից: Բոլոր SS-ների 61.3 տոկոսը ինտերնետից օգտվում են առանձին սարքի կամ կապի միջոցով, իսկ 5.9 տոկոսը՝ միայն բջջային հեռախոսի միջոցով:

Ուշագրավ է, որ Նպաստառուների շրջանում ինտերնետի օգտագործումը ցածր չէ: Նպաստառուների 51.9 տոկոսն ինտերնետից օգտվում են առանձին սարքի կամ կապի միջոցով և 6.9 տոկոսը՝ միայն բջջային հեռախոսի միջոցով:

Աղյուսակ 12. Ինտերնետի օգտագործումը SS-ներում, տոկոս


	Բոլոր SS-ներ				Նպաստառու SS-ներ			
	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը
Այո, բջջային հեռախոսի միջոցով	6.4	6.4	4.9	5.9	6.0	9.1	5.1	6.9
Այո, առանձին սարքի կամ կապի միջոցով	65.6	54.1	63.9	61.3	49.0	44.8	59.7	51.9
Ոչ	28.0	39.5	31.2	32.8	45.0	46.1	35.2	41.3
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Ընդհանուր առմամբ, իրենց կենցաղային պայմաններից գոհունակության վերաբերյալ SS-ների սուբյեկտիվ գնահատականները Նպաստառու և ոչ Նպաստառու SS-ների շրջանում բավականին տարբեր են: Նպաստառուները բավականին դժգոհ են իրենց կենցաղային պայմաններից:

Հանրապետության բոլոր SS-ների 28.4 տոկոսը սեփական կենցաղային պայմանները գնահատել է վատ կամ շատ վատ, իսկ 55.6 տոկոսը՝ բավարար: Նպաստառու SS-ների դեպքում 46.6 տոկոսը սեփական կենցաղային պայմանները գնահատել է վատ կամ շատ վատ, և 48.4 տոկոսը՝ բավարար:

Գծապատկեր 19. Կենցաղային պայմանների սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

4. Տնային տնտեսությունների եկամուտները և ծախսերը

4.1 Եկամուտների աղբյուրները


Հայաստանում SS-ների եկամուտների ամենատարածված աղբյուրն աշխատանքն է: Այն հիմնական եկամուտի աղբյուր է SS-ների 59 տոկոսի համար: Հաջորդ ամենատարածված եկամուտի աղբյուրը կենսաթոշակներն են. SS-ների 48 տոկոսը ստանում է նման եկամուտ: Արտերկրից աշխատանքային եկամուտներ և տրանսֆերտներ ստանում է SS-ների 26 տոկոսը: Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտներ ստանում է SS-ների 19 տոկոսը:

Նպաստառու SS-ների դեպքում եկամուտների կառուցվածքը որոշակիորեն տարբեր է: Ակնհայտորեն, եկամտի ամենատարածված աղբյուրը ընտանեկան նպաստն է: Հետազոտված Նպաստառու SS-ների 96.7 տոկոսն է նշել, որ ստանում է ընտանեկան նպաստ:

Աշխատանքային եկամուտները Նպաստառուների դեպքում ևս մեծ դեր ունեն. նման եկամուտ է ստանում 41 տոկոսը: Կենսաթոշակ ստացող SS-ներն ավելի քիչ են՝ 37.7 տոկոս: Արտերկրից եկամուտներ և գյուղատնտեսական եկամուտներ ստացողների կշիռը մոտ է հանրապետական միջին ցուցանիշներին: Նման եկամուտներ են ստանում Նպաստառուների համապատասխանաբար՝ 25 և 18 տոկոսը:

Նպաստառու SS-ների կազմում համեմատաբար շատ են ՀՀ բարեկամներից օգնություն ստացողները՝ 17 տոկոս (հանրապետական 11 տոկոսի դիմաց), ինչպես նաև հաշմանդամության թոշակներ ստացողները՝ Նպաստառու SS-ների 26 տոկոսը (բոլոր SS-ների 17 տոկոսի դիմաց):

Գծապատկեր 20. SS-ների եկամուտների կառուցվածքը, տոկոս, բազմակի պատասխան



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Ուշագրավ է եկամուտների աղբյուրների բաշխումն ըստ բնակավայրերի տեսակների: Աշխատավարձ և այլ աշխատանքային եկամուտներ ստանում են Երևանում SS-ների 69 տոկոսը, այլ քաղաքներում՝ 57 տոկոսը, իսկ գյուղերում՝ 49 տոկոսը: Հատկապես փոքր են Երևանում աշխատանքային եկամուտներ ստացող Նպաստառու SS-ների կշիռը՝ 24.5 տոկոս:

Կենսաթոշակներ ստացող ՏՏ-ները ևս շատ են Երևանում՝ 51 տոկոս: Գյուղերում կենսաթոշակ են ստանում բոլոր ՏՏ-ների 48.5 տոկոսը, իսկ այլ քաղաքներում՝ 43.8 տոկոսը: Մինչդեռ, Նպաստառու ՏՏ-ների դեպքում, այլ քաղաքների և գյուղերի համեմատ, քիչ են Երևանում կենսաթոշակ ստացողները՝ 35 տոկոս:

Գյուղատնտեսական եկամուտներ են ստանում գյուղաբնակ բոլոր ՏՏ-ների 50.7 տոկոսը, իսկ Նպաստառուների դեպքում՝ 40 տոկոսը: Արտերկրից ստացվող դրամական եկամուտներն ավելի մեծ նշանակություն ունեն հատկապես այլ քաղաքներում, ինչպես նաև գյուղերում թե՛ բոլոր ՏՏ-ների, և թե՛ Նպաստառու ՏՏ-ների դեպքում: Երևանում եկամտի համեմատաբար տարածված աղբյուր է ՀՀ-ում բնակվող բարեկամներից ստացվող օգնությունը, հատկապես Նպաստառուների դեպքում (36 տոկոս): Հաշմանդամության և այլ նպաստներն ունեն գրեթե հավասարաչափ կարևորություն բոլոր տիպի Նպաստառու ՏՏ-ների համար:

Աղյուսակ 13. ՏՏ-ների եկամուտների կառուցվածքը ըստ բնակավայրերի, տոկոս, բազմակի պատասխան

	Բոլոր ՏՏ-ներ				Նպաստառու ՏՏ-ներ			
	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը
Գյուղատնտեսական եկամուտ	4.0	50.7	3.7	19.2	3.3	40.0	3.7	18.2
Աշխատանքային եկամուտ	69.2	49.3	57.0	59.0	24.5	43.8	45.9	41.4
այդ թվում աշխատավարձ	66.1	47.2	56.2	56.9	24.0	22.7	28.8	25.5
Արտերկրից դրամական եկամուտներ	21.2	27.3	31.2	26.2	16.3	23.4	30.7	25.2
ՀՀ-ում բնակվող բարեկամներից օգնություն	18.4	4.2	8.9	10.9	36.3	8.4	17.2	17.0
Կենսաթոշակ	51.1	48.5	43.8	48.0	35.0	40.9	35.8	37.7
Հաշմանդամության թոշակ	12.7	18.8	20.9	17.2	25.5	29.4	23.7	26.3
Ընտանեկան նպաստ	5.6	19.6	18.1	14.5	97.5	97.2	95.8	96.7
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

4.2 Սննդամթերքի սպառում և առաջնային ծախսերի բավարարություն

Հայաստանում ՏՏ-ների սննդամթերքի սպառման զամբյուղում ամենից հաճախ հանդիպող մթերքը հացը և նպարեղենն են: Հաց կամ լավաշ, ինչպես նաև նպարեղեն⁵ սպառում են գրեթե բոլոր ՏՏ-ները: ՏՏ-ների մոտ 98 տոկոսը սպառում են կաթնամթերք և թռչնի միս, իսկ 88 տոկոսը՝ մսամթերք⁶: Ձկնեղենը ՏՏ-ների սննդակարգում ամենաքիչ հանդիպող սնունդն է:

Ձկնեղենը տարվա ընթացքում գրեթե չի հայտնվում հանրապետության բոլոր ՏՏ-ների 58 տոկոսի և Նպաստառու ՏՏ-ների 64 տոկոսի ճաշացանկում: Մսամթերք չեն սպառում բոլոր ՏՏ-ների 12 տոկոսը և Նպաստառու ՏՏ-ների՝ 18.8 տոկոսը: Թռչնի մսի և բանջարեղենի (կարտոֆիլի) սպառումը Նպաստառու ՏՏ-ների շրջանում ավելի մեծ է:

ՏՏ-ների սննդի սպառման ծախսերի մեծ մասը (սննդամթերքի առանձնացված 10 հիմնական խմբերում) ուղղվում է ոգելից խմիչքների և ծխախոտի, ինչպես նաև հացի սպառմանը:

Ոգելից խմիչքներ և ծխախոտ սպառում են բոլոր ՏՏ-ների մոտ 63 տոկոսը, իսկ Նպաստառուների՝ 56 տոկոսը: Ոգելից խմիչքների և ծխախոտի դիմաց միջին ամսական ծախսը մեկ շնչի հաշվով կազմում է 5500 դրամ, իսկ հացի ծախսը՝ 4800 դրամ: Նպաստառու ՏՏ-ների դեպքում՝ ոգելից

⁵ Ներառում է մակարոնեղեն, շաքարավազ, բուսական յուղ և ձեթ:

⁶ Ներառում է տավարի, խոզի և գառան միսը և մսից պատրաստված սննդատեսակները:

խմիչքների և ծխախոտի ծախսերը միջին հաշվով կազմում են 4400 դրամ, իսկ հացի դիմաց՝ մոտ 5000 դրամ (մեկ շնչի հաշվով, ամսական):

SS-ները մեկ շնչի հաշվով միջին ամսական կտրվածքով մոտ 1500 դրամ ծախսում են հյուրերի, ջրեղենի և այլ ոչ ակոհոլային ըմպելիքների վրա, 1800 դրամ՝ քաղցրեղենի և թխվածքների, 1700 դրամ՝ նպարեղենի վրա:

Աղյուսակ 14. Հիմնական սննդամթերքի սպառումը և մեկ շնչի հաշվով միջին ամսական ծախսերը

		Բոլոր SS-ներ				Նպաստառու SS-ներ			
		Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը
Հաց	Սպառում, տոկոս	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
	Ծախս, դրամ	4,325	5,570	4,457	4,773	4,364	5,500	4,703	4,964
Նպարեղեն	Սպառում, տոկոս	99.3	99.7	100.0	99.7	99.8	100.0	99.8	99.9
	Ծախս, դրամ	1,434	2,189	1,506	1,703	1,572	2,225	1,574	1,835
Կաթնամթերք	Սպառում, տոկոս	98.6	97.3	97.1	97.7	97.0	96.5	96.3	96.5
	Ծախս, դրամ	3,364	4,996	3,300	3,877	2,270	4,212	2,686	3,226
Մսամթերք	Սպառում, տոկոս	90.8	86.2	86.5	88.0	77.5	82.5	81.6	81.2
	Ծախս, դրամ	3,269	5,040	3,258	3,834	2,145	3,329	2,473	2,767
Թռչնի միս և ձու	Սպառում, տոկոս	99.1	96.3	98.3	97.9	99.0	98.5	98.6	98.6
	Ծախս, դրամ	1,873	2,384	1,557	1,941	1,628	1,754	1,350	1,560
Ձկնեղեն	Սպառում, տոկոս	37.2	46.9	43.6	42.3	16.8	39.6	39.9	35.8
	Ծախս, դրամ	1,169	1,848	1,385	1,483	1,107	1,645	1,291	1,434
Միրգ և բանջարեղեն	Սպառում, տոկոս	99.1	99.7	100.0	99.6	100.0	100.0	99.4	99.7
	Ծախս, դրամ	2,731	3,606	2,755	3,026	2,509	3,690	2,702	3,066
Հյութեր և ըմպելիքներ	Սպառում, տոկոս	96.2	99.5	98.6	98.0	92.0	99.4	97.3	97.2
	Ծախս, դրամ	1,142	1,980	1,426	1,507	805	1,598	1,183	1,291
Քաղցրեղեն և թխվածք	Սպառում, տոկոս	84.5	94.2	93.4	90.4	80.8	95.5	96.3	93.3
	Ծախս, դրամ	1,561	2,156	1,774	1,831	1,240	1,698	1,432	1,512
Ոգելից խմիչքներ և ծխախոտ	Սպառում, տոկոս	59.1	72.4	58.7	63.3	44.8	66.0	49.9	55.5
	Ծախս, դրամ	4,755	6,548	4,853	5,454	4,040	5,137	3,594	4,393

Աղբյուրը՝ SՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Սննդի վրա կատարվող իրենց ծախսերը բավարար են համարել բոլոր SS-ների 41.4 տոկոսը, մասամբ բավարար՝ 25.5 տոկոսը, իսկ ընդհանրապես ոչ բավարար՝ 5.3 տոկոսը: Նպաստառու SS-ների դեպքում սննդի ծախսերի բավարարության աստիճանը բավականին ցածր է: Դրանց միայն 33 տոկոսն է համարում բավարար, 38 տոկոսը՝ մասամբ բավարար, իսկ 7 տոկոսը՝ ընդհանրապես ոչ բավարար:

Աղյուսակ 15. SS-ների կողմից վերջին 12 ամիսների ընթացքում սննդի և ոչ պարենային ծախսերի բավարարության գնահատականները, տոկոս

	Բավարարության սուբյեկտիվ գնահատականներ*					
	1	2	3	4	5	
Սննդի ծախսեր	5.3	25.5	41.4	21.3	6.6	Բոլոր SS-ներ
	7.1	38.1	32.9	19.4	2.4	Նպաստառու SS-ներ
Լվացքի պարագաներ, օճառ և անձնական հիգիենայի, խնամքի հետ կապված ծախսեր	4.6	28.0	37.9	21.5	8.0	Բոլոր SS-ներ
	5.8	36.6	38.6	17.3	1.7	Նպաստառու SS-ներ
Հազուտի և այլ ոչ պարենային ապրանքների ծախսեր	19.0	33.1	31.8	12.3	3.8	Բոլոր SS-ներ
	23.9	42.3	27.7	5.4	0.7	Նպաստառու SS-ներ

*1-Ընդհանրապես չի բավարարում, 5-Լիովին բավարարում է
Աղբյուրը՝ SՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Աղյուսակում ներկայացվում են նաև ոչ պարենային ապրանքներին ուղղված ծախսերից բավարարվածության գնահատականները: Նպաստառու SS-ների դեպքում այս ծախսերի բավարարության գնահատականները ևս խիստ ցածր են: Լվացող միջոցների և անձնական հիգիենայի, խնամքի հետ կապված ծախսերն ընդհանրապես չեն բավարարում կամ մասամբ են բավարարում Նպաստառուների 33 տոկոսին (բոլոր SS-ների դեպքում՝ 42 տոկոս): Հագուստի և այլ ոչ պարենային ապրանքների ծախսերը ընդհանրապես չեն բավարարում կամ մասամբ են բավարարում Նպաստառու SS-ների 66 տոկոսին (բոլոր SS-ների դեպքում՝ 52 տոկոս):

Ուշագրավ է, որ սոցիալական ծառայությունների և առաջնային կարիքների համար անհրաժեշտ ծախսերի մակարդակից բավարարության աստիճանի գնահատականները շատ ավելի ցածր են: Մասնավորապես, բոլոր SS-ների մոտ 59 տոկոսը և Նպաստառուների 73 տոկոսը հանգստին և զվարճանքին ուղղված իրենց փաստացի ծախսերը համարել են ընդհանրապես ոչ բավարար:

Բոլոր SS-ների 36 տոկոսը և Նպաստառուների 41 տոկոսը ընդհանրապես ոչ բավարար են գնահատել ծիսակատարություններին, ընտանեկան և բարեկամական միջավայրում հանդիսություններին և միջոցառումներին ուղղված իրենց ծախսերը:

Առողջապահական ծախսերն ընդհանրապես չեն բավարարել բոլոր SS-ների 23 տոկոսին և Նպաստառուների 30 տոկոսին, իսկ կրթական ծախսերը՝ բոլոր SS-ների 8 տոկոսին և Նպաստառուների՝ 12 տոկոսին:


Աղյուսակ 16. SS-ների կողմից վերջին 12 ամիսների ընթացքում սոցիալական կարիքներին ուղղված ծախսերի բավարարության գնահատականները, տոկոս

	Բավարարության սուբյեկտիվ գնահատականներ*					
	1	2	3	4	5	
Կրթության հետ կապված ծախսեր	8.3	28.3	31.9	25.0	6.6	Բոլոր SS-ներ
	12.0	35.9	32.3	18.0	1.9	Նպաստառու SS-ներ
Առողջապահական ծախսեր	23.3	28.7	29.2	15.8	3.0	Բոլոր SS-ներ
	29.5	31.2	27.7	11.0	0.7	Նպաստառու SS-ներ
Հանգստին և զվարճանքին ուղղված ծախսեր	58.6	18.3	15.7	6.2	1.3	Բոլոր SS-ներ
	72.7	16.9	8.3	2.0	0.1	Նպաստառու SS-ներ
Ծիսակատարությունների ծախսեր	35.9	27.1	22.2	10.9	4.0	Բոլոր SS-ներ
	41.3	33.4	16.1	6.9	2.3	Նպաստառու SS-ներ

1-Ընդհանրապես չի բավարարում, 5-Լիովին բավարարում է
Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Ստորև բերվող գծապատկերում առանձնացված են այն SS-ները, որոնց կողմից քննարկված ուղղություններով կատարված փաստացի ծախսերն ընդհանրապես չեն բավարարել SS առաջնային կարիքներին:

Գծապատկեր 21. SS-ների քանակ, որոնց փաստացի ծախսերի մակարդակն ընդհանրապես չի բավարարել նշված ուղղություններով առաջնային կարիքներին, տոկոս




Աղբյուրը՝ SՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Հաջորդ գծապատկերում արդեն առանձնացված են այն SS-ները, որոնց կողմից կատարված փաստացի ծախսերը լիովին բավարարել են SS առաջնային կարիքներին:

Նկատենք, որ հանգստի ու զվարճանքի, առողջապահական, հագուստի և այլ ոչ պարենային ապրանքների առաջնային կարիքներին ուղղված ծախսերից լիովին բավարարված SS-ների քանակը քիչ է թե՛ Նպաստառու և թե՛ ոչ Նպաստառու SS-ների շրջանում:

Գծապատկեր 22. SS-ների քանակ, որոնց փաստացի ծախսերի մակարդակը լիովին բավարարել է նշված ուղղություններով առաջնային կարիքներին, տոկոս




Աղբյուրը՝ SՏԸՀ-2015, ՏՀՀԿ

4.3 Կոմունալ ծախսեր և վճարներ

Ստորև ներկայացվում են ՏՏ-ների կողմից հիմնական կոմունալ ծախսերը և վճարումները: Ըստ ՏՏԸՀ-2015 տվյալների, սեպտեմբեր ամսվա ընթացքում միջին ՏՏ-ի էլեկտրաէներգիայի դիմաց վճարումը կազմել է մոտ 7,746 դրամ, իսկ միջին Նպաստառու ՏՏ-ի դեպքում՝ մոտ 6,527 դրամ: Բնական գազի դիմաց վճարումները կազմել են համապատասխանաբար 6,844 և 5,930 դրամ:

Գծապատկեր 23. Միջին կոմունալ ծախսերն ամառային ամիսներին, դրամ




Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Ամառային ամիսների համեմատ՝ ձմեռային ամիսների էլեկտրաէներգիայի ծախսերը մոտ 50 տոկոսով բարձր են: Միջին ՏՏ-ի դեպքում այն կազմել է 12,000, իսկ Նպաստառու ՏՏ-ների դեպքում՝ 9,700 դրամ: Բնական գազի ծախսերը ձմեռային ամիսներին համապատասխանաբար 3.2 և 2.4 անգամ գերազանցում են ամառային ծախսերին:

Վառելիքայտի և այլ վառելիքի վրա ՏՏ-ները միջինում ծախսում են մոտ 28,000 դրամ, Նպաստառու ՏՏ-ների ծախսերը զիջում են մոտ 10 տոկոսով և կազմում 25,000 դրամ:

Հեղուկ գազի և խմելու ջրի հետ կապված ծախսերն ամառային և ձմեռային ամիսներին էականորեն չեն տարբերվում: Սեզոնային ազդեցությունների չեն ենթարկվում նաև բջջային հեռախոսի և ինտերնետի (ներառյալ՝ TV և այլ կապի ծառայություններ) ծախսերը: Նպաստառու ՏՏ-ների բջջային հեռախոսի միջին ծախսը շուրջ 50 տոկոսով և ինտերնետի ծախսը՝ շուրջ 20 տոկոսով փոքր են՝ հանրապետության բոլոր ՏՏ-ների համապատասխան ծախսերի համեմատ:

Գծապատկեր 24. Միջին ամսական կոմունալ ծախսերը ձմեռային ամիսներին, դրամ



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ


4.4 Պարտքի կառուցվածք և ֆինանսական դիրք

SS-ների 38 տոկոսը և Նպաստառուների 36 տոկոսն ունեն վարկեր բանկերից և վարկային կազմակերպություններից: Ապառիկ գնումների գծով պարտքային պարտավորություններ ունեն բոլոր SS-ների 25 տոկոսը և Նպաստառու SS-ների 21 տոկոսը: Գրավատներից փոխառություններ ունեն բոլոր SS-ների 14 տոկոսը: Նպաստառուների դեպքում գրավատներից փոխառություններ ունեցողներն ավելի շատ են՝ մոտ 19 տոկոս:

Ոչ ֆորմալ կերպով ստանձնած ֆինանսական պարտավորությունները Նպաստառուների շրջանում ավելի մեծ են: Մասնավորապես, անհատներին պարտքային պարտավորություններ ունեն բոլոր SS-ների 18.5, իսկ Նպաստառու SS-ների՝ 27 տոկոսը:

Զգալի մեծ է սննդամթերքի գնումների դիմաց խանութներին և վաճառակետերին պարտքեր ունեցողների թվաքանակը: Հայաստանի բոլոր SS-ների 25 տոկոսը և Նպաստառուների 46 տոկոսն ունեն սննդամթերքի ձեռքբերման դիմաց չվճարումներ և պարտքեր:


Գծապատկեր 25. SS-ների վարկային և այլ պարտքային պարտավորությունների կառուցվածքը, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Սննդի ձեռքբերման դիմաց չվճարումներ և պարտքեր ունեցողների մեծամասնությունն ունեն նաև այլ պարտքային պարտավորություններ: Արդյունքում, նման SS-ների պարտքի ընդհանուր մեծությունը միջին հաշվով կազմում է 1,070 հազար դրամ, իսկ Նպաստառուների դեպքում՝ 772 հազար դրամ:


Գծապատկեր 26. Սննդի ձեռքբերման դիմաց պարտքեր ունեցողները և դրանց ընդամենը միջին պարտքը



Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Բացառապես սննդի ձեռքբերման դիմաց չվճարումներ և պարտքեր ունեցողները (որոնք չունեն այլ պարտքային պարտավորություններ) բավականին քիչ են՝ բոլոր SS-ների 5.4 տոկոսը և Նպաստառուների 10 տոկոսը: Զուտ սննդի ձեռքբերման դիմաց չվճարումների և պարտքի միջին մեծությունը կազմում է 82 հազար դրամ՝ բոլոր SS-ների համար և 78 հազար դրամ՝ Նպաստառու SS-ների համար:

Գծապատկեր 27. Բացառապես սննդի ձեռքբերման դիմաց պարտքեր ունեցողները և սննդի ձեռքբերման դիմաց միջին պարտքը




Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՁՀԿ

Հայաստանի SS-ների 59 տոկոսը և Նպաստառուների 62 տոկոսն ունեն պարտքային պարտավորություններ ֆինանսական ինստիտուտներին և անհատներին (չի ներառում սննդի դիմաց պարտքերը և այլ չվճարումները): Նման պարտքեր ունեցողները հատկապես շատ են գյուղերում՝ 68 տոկոս, Նպաստառուների դեպքում՝ 73 տոկոս:

Ֆինանսական ինստիտուտներին և անհատներին պարտքեր ունեցողների 28 տոկոսն ունի մեկից ավելի պարտքային պարտավորություններ: SS-ների պարտքային պարտավորությունները մեծամասամբ արտահայտված են ազգային արժույթով (դրամով), ինչպես նաև ԱՄՆ դոլարով:

Գծապատկեր 28. Ֆորմալ վարկեր և անհատներից պարտքեր ունեցող SS-ներն ըստ բնակավայրերի, տոկոս*




*Չի ներառում սննդի դիմաց խանութներին և վաճառակետերին պարտքեր և այլ չվճարումներ ունեցողներին
Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՁՀԿ


Այսպիսով, Հայաստանի SS-ների մոտ 64 տոկոսը (Նպաստառուների՝ 72 տոկոսը) ունի պարտքային պարտավորություններ, որի միջին մեծությունը կազմում է մոտ 2,800 (1,600) ԱՄՆ դոլար (տե՛ս գծապատկեր 29 և 30):

Ֆինանսական ինստիտուտներին և անհատներին պարտքեր ունեցող ՏՏ-ների (59 տոկոս) ընդհանուր միջին պարտքը կազմում է 3,000 ԱՄՆ դոլար: Այս ՏՏ-ների մեծ մասը, կամ բոլոր ՏՏ-ների 52 տոկոսը, ունեն դրամային պարտք՝ միջին հաշվով 2000 ԱՄՆ դոլար: Դոլարով արտահայտված վարկեր կամ պարտքեր ունեն բոլոր ՏՏ-ների 10 տոկոսը, որի միջին մեծությունը կազմում է մոտ 6,800 ԱՄՆ դոլար նման պարտավորություն ունեցող բոլոր ՏՏ-ների համար: Նպաստառու ՏՏ-ների 9.9 տոկոսն ունի դոլարով արտահայտված պարտք՝ միջին հաշվով 2,600 ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 29. Պարտքային պարտավորություններ ունեցող ՏՏ-ները, տոկոս



Գծապատկեր 30. ՏՏ-ների պարտքի միջին մեծությունը, ԱՄՆ դոլար



5. Աղքատության պատկերը և Նպաստառու SS-ները

Աղքատության մակարդակի ճշգրիտ գնահատումը ՏՀՀԿ ՏՏԸՀ-2015 հետազոտության հիմնական նպատակներից էր: Այնուհանդերձ, հետազոտությամբ ստացված տվյալների հիման վրա իրականացվել են SS-ների աղքատության մակարդակի անուղղակի գնահատումներ: Դրա համար SS-ների սուբյեկտիվ գնահատականները համադրվել են հարցազրուցավարների գնահատականների հետ և ճշգրտվել ՏՏ կողմից էլեկտրաէներգիայի (և մյուս կոմունիկացիաների), ինչպես նաև մեկ շնչի հաշվով սննդի ծախսերի վերաբերյալ ստացված տվյալներով:

Արդյունքում, ստացված փորձագիտական տվյալները բավականին համահունչ են ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ տվյալներին: Մասնավորապես, ծայրահեղ աղքատության ցուցանիշները գրեթե համընկնում են՝ շեղվելով ընդամենը 0.3 տոկոսային կետով (Նպաստառուների դեպքում՝ 0.1 տոկոսային կետով), իսկ Շատ աղքատության ցուցանիշները բավականին մոտ են՝ շեղվելով 2.4 տոկոսային կետով:

Հարկ է նկատել, որ ՏՏԿԱՀ և ՏՀՀԿ ՏՏԸՀ-2015 հետազոտությունների մեթոդաբանությունները սկզբունքորեն տարբեր են: ՏՏԿԱՀ արդյունքներն արտահայտում են 2014-ի ողջ ընթացքում SS-ների սպառման ցուցանիշները: ՏՏԸՀ-2015 արդյունքներն արտահայտում են տվյալ պահի (2015-ի սեպտեմբեր) պատկերը և ընկալումը:

Ստորև աղյուսակում ներկայացվում են նշված երկու աղբյուրների հիման վրա տնային տնտեսությունների աղքատության ցուցանիշների գնահատականների համադրումները:

Աղյուսակ 17. SS-ների աղքատության մակարդակի գնահատականների համադրում, տոկոս

	Բոլոր SS-ներ		Նպաստառու SS-ներ	
	ՏՏԿԱՀ, 2014	ՏՀՀԿ, 2015	ՏՏԿԱՀ, 2014	ՏՀՀԿ, 2015
Աղքատ և ծայրահեղ աղքատ	25.9	33.2	45.2	56.2
Ծայրահեղ աղքատ	1.9	2.2	4.7	4.8
Շատ աղքատ	7.0	9.4	15.3	20.2
Աղքատ	16.97	21.6	25.2	31.3
Ոչ աղքատ	74.2	66.8	54.8	43.8
Ընդամենը SS-ներ	100	100	100	100

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ 2014թ. տվյալների բազա, ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ հաշվարկներ և գնահատականներ


Այսպիսով, ըստ մեր գնահատականների, Հայաստանում SS-ների 2.2 տոկոսը ծայրահեղ աղքատ են, իսկ 9.4 տոկոսը՝ Շատ աղքատ: Նպաստառու SS-երի 4.8 տոկոսն են ծայրահեղ աղքատ և 20 տոկոսը՝ Շատ աղքատ: Արդյունքում, աղքատ, շատ աղքատ և ծայրահեղ աղքատ են բոլոր SS-ների 33 տոկոսը և Նպաստառուների՝ 56 տոկոսը⁷:

Շատ աղքատները շատ են գյուղերում՝ 13 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատները՝ մարզային քաղաքներում՝ 3.2 տոկոս: Նպաստառու SS-ների դեպքում ծայրահեղ աղքատները շատ են Երևանում՝ 5.5 տոկոս: Նպաստառուների շուրջ 27 տոկոսը Երևանում և 25 տոկոսը գյուղերում շատ աղքատ են: Աղքատ SS-ները ևս շատ են Երևանում և գյուղերում՝ համապատասխանաբար 35 և 33 տոկոս:

Այսպիսով, Նպաստառու SS-ների կազմում կան ոչ աղքատ SS-ներ, որոնք հատկապես շատ են մարզային քաղաքներում՝ 54 տոկոս:

⁷ Ծայրահեղ աղքատներ են համարվում այն SS-ները, որոնք չեն կարողանում բավարարել սննդի ծախսերը և գտնվում են աղքատության պարենային գծից ներքև: Պարենային գիծը 2014-ին մեկ չափահասի հաշվով կազմել է 23,384 դրամ: Շատ աղքատները աղքատության ստորին ընդհանուր գծից (2014-ին կազմել է 33,101 դրամ) ներքև գտնվողներն են: Աղքատ են համարվում աղքատության վերին ընդհանուր գծից (2014-ին կազմել է 40,264 դրամ) ներքև գտնվողները:

Գծապատկեր 31. Աղքատության գնահատականներն ըստ բնակավայրերի, տոկոս




Աղբյուրը՝ ՏՀՀԿ-2015, ՏՀՀԿ

Նպաստառու SS-ներն, ըստ էության, պետք է հանդիսանային ծայրահեղ աղքատ և շատ աղքատ SS-ներ և դրանց կազմում, տեսականորեն, չպետք է լինեին ոչ աղքատ SS-ներ: Ծայրահեղ աղքատների և շատ աղքատների ոչ լիարժեք ընդգրկումը և, փոխարենը, ոչ աղքատների ընդգրկումը Ընտանեկան նպաստի համակարգում խոսում է համակարգի հասցեականության մակարդակի մասին: Հասցեականության գնահատման համար սովորաբար կիրառվող ցուցանիշներից են՝ «ընդգրկման սխալը» և «չընդգրկման սխալը»:

Եթե որպես համակարգի շահառուներ դիտարկենք բոլոր աղքատներին, ապա համակարգի չընդգրկման սխալը, ըստ ՏՀՀԿ-2015-ի արդյունքների, կկազմի 73 տոկոս: Այսինքն, 2015-ին աղքատների 73 տոկոսը փաստացի ընդգրկված չեն եղել համակարգում:

Չընդգրկման սխալը շատ աղքատների համար (ներառյալ՝ ծայրահեղ աղքատները) կազմում է 63 տոկոս, իսկ միայն ծայրահեղ աղքատների համար՝ 56 տոկոս: Այսպիսով, ծայրահեղ աղքատների կեսից ավելին Նպաստառու չէ:

Գծապատկեր 32. Ընդգրկման և չընդգրկման սխալի գնահատականները, տոկոս




Աղբյուրը՝ ՏՀՀԿ, ՏՀՀԿ-2015

Ինչ վերաբերում է ընդգրկման սխալին, ապա բոլոր աղքատների համար այն կազմում է 43.8 տոկոս: Շատ աղքատների (ներառյալ՝ Ծայրահեղ աղքատները) համար ընդգրկման սխալը կազմում է 75 տոկոս, իսկ միայն ծայրահեղ աղքատների համար՝ 95 տոկոս: Դա նշանակում է, որ համակարգում ընդգրկվածների 95 տոկոսը չեն հանդիսացել ծայրահեղ աղքատներ:

Ըստ բնակավայրերի ընդգրկման սխալը բավականին տարբեր է: Ընդգրկման սխալը ամենացածրը Երևանում է և ամենաբարձրը՝ մարզային քաղաքներում: Շատ աղքատների համար ընդգրկման սխալը մարզային քաղաքներում 82.4 տոկոս է, այն դեպքում, երբ Երևանում 68 տոկոս է:


Գծապատկեր 33. Ընդգրկման սխալի գնահատականներն ըստ բնակավայրերի, տոկոս



Աղբյուրը՝ ՏՀՀԿ-2015, ՏՀՀԿ

Ի տարբերություն ընդգրկման սխալի, չընդգրկման սխալը մեծ է Երևանում՝ շատ աղքատների համար 67.7 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատների համար՝ 80 տոկոս: Չընդգրկման սխալը փոքր է գյուղերում. շատ աղքատների համար կազմում է 58.6 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատների համար՝ 33 տոկոս:

Գծապատկեր 34. Չընդգրկման սխալի գնահատականներն ըստ բնակավայրերի, տոկոս




Աղբյուրը՝ ՏՀՀԿ-2015, ՏՀՀԿ

Հայաստանում ՏՏ-ների 54 տոկոսը գտնում է, որ իրենց ՏՏ-ն պետության կողմից սոցիալական աջակցության և, մասնավորապես, նպաստի ստացման կարիք ունի: Այս կարծիքին են Նպաստառու ՏՏ-ների 98.2 տոկոսը:

Միևնույն ժամանակ, Նպաստառու ՏՏ-ների 1.3 տոկոսը, թեև հաշվառված է եղել Ընտանեկան նպաստների համակարգում և հետազոտության իրականացման ժամանակ հանդիսացել է Նպաստառու, խոստովանել է, որ դրա կարիքը չունի, իսկ 0.5 տոկոսը՝ դժվարացել է պատասխանել:

Գծապատկեր 35. ՏՏ-ների գնահատականները Ընտանեկան նպաստի ստացման կարիքի վերաբերյալ, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Նպաստները հիմնականում ուղղվում են կոմունալ վճարումներին և սննդի ձեռքբերման ծախսերին: Նպաստները կոմունալ վճարումներին են ուղղել նպաստառուների 79 տոկոսը, իսկ սննդի ձեռքբերմանը՝ 61 տոկոսը:

ՏՏ-ների մոտ 11 տոկոսը նպաստները ուղղել է կրթության հետ կապված ծախսերին: Առողջապահական ծախսերի կշիռը կազմում է 4.6 տոկոս: Մնացած 4.1 տոկոսի դեպքում, նպաստներն ուղղվել են հիմնականում հագուստի գնմանը և ՏՏ պարտավորությունների մարումներին:

Գծապատկեր 36. ՏՏ-ների կողմից նպաստի ծախսման հիմնական ուղղությունները, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

6. Առողջապահական պատկերը

SS բոլոր անդամների առողջական վիճակի վերաբերյալ սուբյեկտիվ ինքնագնահատականների համաձայն՝ պարզ է դառնում, որ Հայաստանի բնակչության մոտ 48 տոկոսը չունի որևէ առողջական խնդիր, 19 տոկոսի առողջական վիճակը լավ է, իսկ 22 տոկոսինը՝ չնայած որոշ խնդիրների առկայությանը, բավարար: Առողջական վիճակը վատ է 11 տոկոսի մոտ, իսկ 0.3 տոկոսի մոտ՝ ծայրահեղ վատ:

Նպաստառու բնակչության դեպքում, չնայած ծայրահեղ վատ առողջական վիճակ ունեցողները մի փոքր ավելի շատ են, առողջական ընդհանուր պատկերն ավելի լավ է: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Նպաստառու ընտանիքներում երեխաների մասնաբաժինը մոտ 2 անգամ շատ է և, ընդհանրապես, այս ընտանիքներն ավելի երիտասարդ են (տե՛ս գծապատկեր 11):


Գծապատկեր 37. Բնակչության առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս



Աղբյուրը՝ SՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Եթե առողջական վիճակը լավ կամ շատ լավ է գնահատվում բնակչության 66 տոկոսի համար, ապա տղամարդկանց դեպքում այս ցուցանիշը 64 տոկոս է, իսկ կանանց դեպքում՝ 55 տոկոս: Առողջական վիճակը վատ կամ ծայրահեղ վատ է տղամարդկանց 13 տոկոսի, իսկ կանանց՝ 16 տոկոսի համար: Նպաստառուների դեպքում, թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց, առողջական վիճակն ավելի վատ է: Ընդ որում, վատ կամ ծայրահեղ վատ առողջական վիճակ ունեցող տղամարդկանց կշիռը Նպաստառուների կազմում մեծ է:

Գծապատկեր 38. Բնակչության առողջական վիճակի գնահատականներն ըստ գենդերի, տոկոս




Աղբյուրը՝ SՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Հանրապետության բոլոր երեխաների մոտ 94 տոկոսի առողջական վիճակը գնահատվում է լավ կամ շատ լավ, իսկ Նպաստառուների դեպքում՝ 90 տոկոսի: Չնայած երեխաները շատ են Նպաստառու բնակչության կազմում, շատ են նաև ծայրահեղ վատ և վատ առողջական վիճակում գտնվող երեխաները՝ 3.1 տոկոս (հանրապետական միջին՝ 1.5 տոկոսի դիմաց):

Թեև բնակչության մոտ 12 տոկոսի առողջական վիճակը գնահատվել է վատ կամ ծայրահեղ վատ և 22 տոկոսինը՝ բավարար, այնուհանդերձ բնակչության 27 տոկոսը կարիք ունի հետևողական բժշկական խնամքի: Հետևողական բժշկական խնամքի կարիք ունի Նպաստառուների 26 տոկոսը:


Գծապատկեր 39. Հետևողական բժշկական խնամքի կարիքի սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Հետևողական բուժման կարիք ունեցողների մեծամասնությունը կանայք են: Նպաստառուների կազմում մեծ է հետևողական բուժման կարիք ունեցող երեխաների կշիռը: Նպաստառու բնակչության կազմում հետևողական բուժման կարիք ունեցողների 53 տոկոսը կին է, 35 տոկոսը՝ տղամարդ և մոտ 12 տոկոսը՝ երեխա:

Գծապատկեր 40. Հետևողական բժշկական կարիք ունեցողների գենդերային կառուցվածքը, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում բոլոր SS-ների 66 տոկոսում և Նպաստառու SS-ների 71 տոկոսում անդամներից առնվազն մեկը բժշկական միջամտության և բժշկական ծառայությունների ստացման կարիք կամ անհրաժեշտություն է ունեցել: Բժշկի դիմելու

անհրաժեշտությունն ավելի փոքր է ոչ աղքատ SS-ներում՝ 62 տոկոս, աղքատների՝ 73 տոկոս մակարդակի դիմաց:


Գծապատկեր 41. Բժշկական միջամտության անհրաժեշտություն ունեցողները վերջին 12 ամիսների ընթացքում, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Չնայած դրան, բժշկի են դիմել բոլոր SS-ների 55 տոկոսը (ընդ որում՝ մի մասը դիմել է առանձին դեպքերում): Բոլոր SS-ների 10.5 տոկոսը (որը կազմում է կարիք ունեցողների 16 տոկոսը) անհրաժեշտության դեպքում չեն դիմել բժշկի:

Գծապատկեր 42. Բժշկական օգնության կարիքը և բժշկի դիմելիությունը ՀՀ բոլոր SS-ների համար, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Բժշկական միջամտության անհրաժեշտության առաջացման դեպքում բժշկի չդիմելու պատճառներն էապես չեն տարբերվում Նպաստառուների և ոչ Նպաստառուների համար: Գլխավորը ֆինանսական պատճառներն են՝ բոլոր SS-ների 83 և Նպաստառու SS-ների 85 տոկոսի համար: Առողջապահական համակարգի նկատմամբ վստահությունը ևս չդիմելու պատճառներից է, մասնավորապես, բոլոր SS-ների 10 տոկոսը չի վստահում և գտնում է, որ օգուտ չէր տա բժշկին դիմելը՝ նույնիսկ անհրաժեշտության դեպքում:

Աղյուսակ 18. Բժշկի չդիմելու պատճառները, տոկոս


	Բոլոր SS-ներ	Նպաստառու SS-ներ
Լուրջ հիվանդություններ չեն եղել	6.2	8.5
Տնային պայմաններում բուժումը բավարար է	7.5	6.8
Ֆինանսական պատճառներ	83.1	84.5
Չենք վստահում, միևնույն է օգուտ չի տա	10.1	7.6
Հիվանդանոցը հեռու է	2.6	2.4
Ժամանակ չկա	2.3	1.3

Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Հիվանդանոցային բուժօգնությունը Նպաստառուների համար

Ըստ ՏՁՀԿ հետազոտությամբ ստացված տվյալների, Հայաստանի տնային տնտեսությունների 14 տոկոսը կամ բնակչության ավելի քան 16 տոկոսը Ընտանեկան նպաստների համակարգի Նպաստառուներ են: Այս բնակչությունը համարվում է «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի պոտենցիալ շահառուներ⁸: Համաձայն ստացված տվյալների, հետազոտությանը նախորդած 12 ամիսներին հիվանդանոցային բուժօգնություն են ստացել Նպաստառուների 23 տոկոսը:


Գծապատկեր 43. Բժշկական միջամտության կարիքը և հիվանդանոցային բուժօգնություն ստացածները



*Նշում. Դեպքերի քանակն Նպաստառու բնակչության նկատմամբ: Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՁՀԿ

Հիվանդանոցային բուժօգնություն ստացածների գերազանց մեծամասնությունը, անկախ սոցիալական կարգավիճակից, կատարել է որևէ վճարում: Վճարումներ են կատարվել բուն բուժման, դեղորայքի, հետազոտությունների կամ այլ ծառայությունների դիմաց՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ կերպով: Որևէ վճարում կատարել են հիվանդանոցային բուժում ստացած Նպաստառուների 78 տոկոսը: Հիվանդանոցային միջին դեպքի համար վճարումը կազմել է 165 հազար դրամ:

Գծապատկեր 44. Հիվանդանոցային բուժօգնության դիմաց վճարում կատարած Նպաստառուները և միջին վճարումը




Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՁՀԿ

⁸ Նշված բյուջետային ծրագրի շահառուներ են հանդիսանում նաև «հատուկ խմբերում ընդգրկված» անձիք, որը սահմանվում է ՀՀ կառավարության N 318-Ն որոշմամբ:

Ընդհանուր առմամբ, հիվանդանոցային բուժօգնության տևողությունը և, կախված դրանից, վճարումները բավականին տարբեր են: Հետազոտությամբ գրանցված Նպաստառուների հիվանդանոցային դեպքերի 20 տոկոսի բուժման տևողությունը կազմել է 1-3 օր, 35 տոկոսինը՝ 4-7 օր, 26 տոկոսինը՝ 8-14 օր, և այլն (տե՛ս գծապատկեր 45):

Գծապատկեր 45. Հիվանդանոցային բուժօգնության դեպքերի բաշխումն ըստ տևողության և միջին վճարումների



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Բուժման տևողության աճի հետ մեկտեղ աճում է նաև հիվանդների կողմից վճարումները: Բուժման 1-3 օր տևողության դեպքերում միջին վճարումը կազմել է 86 հազար դրամ, իսկ 4-7 օր տևողության դեպքերում՝ 138 հազար դրամ և այլն:

7. Հիմնական արդյունքներ և եզրահանգումներ

- Սույն վերլուծական հաշվետվությունը, հիմնվելով տնային տնտեսությունների վիճակագրական ընտրանքային հետազոտության արդյունքների վրա, նկարագրում է Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համակարգում ընդգրկված տնային տնտեսությունների և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը՝ համեմատելով ՀՀ մյուս բոլոր տնային տնտեսությունների (և բնակչության) հետ:
- Տնային տնտեսությունների վիճակագրական ընտրանքային հետազոտությանն իրականացվել է ՏՀՀԿ կողմից 2015 թվականին: Ստացված արդյունքները հիմնական ժողովրդագրական ցուցանիշների գծով համընկնում են ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հետ՝ աննշան շեղումներով: Դա վկայում է հետազոտության արդյունքների որակի և մյուս բոլոր տվյալների արժանահավատության մասին:

Սոցիալ ժողովրդագրական ընդհանուր պատկերը

- Հայաստանի ՏՏ-ների մոտ 37 տոկոսը բնակվում է Երևան քաղաքում, 30 տոկոսը՝ այլ քաղաքներում և 33 տոկոսը՝ գյուղերում: ՏՏ-ի 14 տոկոսը կամ շուրջ 105 հազար ընտանիք ստանում են ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ: Նպաստառու ՏՏ-ները համեմատաբար շատ են այլ քաղաքներում և գյուղերում: Երևանաբնակ են Նպաստառու ՏՏ-ների ընդամենը 17 տոկոսը: Նպաստառուների կազմում ամենից մեծ համեմատական կշիռ ունի Լոռու մարզը՝ այս մարզում են բնակվում բոլոր Նպաստառու ՏՏ-ների 19 տոկոսը, թեև ամենաաղքատ մարզը Շիրակի մարզն է:
- Նպաստառու ընտանիքներն, ընդհանուր առմամբ, իրենց սոցիալ ժողովրդագրական բնութագրերով բավականին տարբեր են՝ հանրապետության միջին ՏՏ համեմատությամբ: Այս ընտանիքներն ավելի մեծ են, բազմազավակ և երիտասարդ: Նպաստառուների միջին տարիքը կազմում է 28.9 տարի՝ հանրապետական 36.6 ցուցանիշի դիմաց, իսկ անդամների միջին թվաքանակը կազմում է 4.9 մարդ՝ հանրապետական 4.2 մարդ ցուցանիշի դիմաց:
- Նպաստառու ՏՏ-ների 24 տոկոսը 4 անդամից բաղկացած ՏՏ-ներ են, իսկ 23 տոկոսը՝ 5 անդամ ունեցողներ: Երեխաներ ունեն Նպաստառու ՏՏ-ների ավելի քան 87 տոկոսը: Մասնավորապես, գերակշռում են երկու երեխա ունեցող ՏՏ-ները, որոնց կշիռը կազմում է 42 տոկոս: Երեք երեխա ունեցող ՏՏ-ները կազմում են նպաստառուների 19 տոկոսը: Արդյունքում, Նպաստառու բնակչության 38 տոկոսը երեխաներ են (0-15 տարեկան): 63 տարեկանից բարձր բնակչության ընդգրկվածությունը փոքր է՝ ընդամենը 9 տոկոս:
- Նպաստառու ՏՏ-ներն առանձնանում են նաև կանանց և հաշմանդամների մեծ, իսկ ծերերի՝ փոքր կշռով: Մասնավորապես, ծերեր կան Նպաստառու ՏՏ-ների 36 տոկոսում՝ հանրապետական 47 տոկոս ցուցանիշի դիմաց, իսկ հաշմանդամներ կան 28 տոկոսում՝ հանապետական 24 տոկոսի դիմաց: Բավականաչափ մեծ է նաև կին գլխավորող և միայն կանանցից ու երեխաներից բաղկացած ՏՏ-ների կշիռը՝ համապատասխան հանրապետական ցուցանիշների համեմատ:
- Նպաստառուներն առանձնանում են նաև կրթական ցածր մակարդակով: Մասնավորապես, առավել ցածր է Նպաստառու տղամարդկանց կրթական մակարդակը՝ հանրապետական միջինի համեմատ:
- Նպաստառու ՏՏ-ների 48 տոկոսում կան գործազուրկներ: Ընդ որում, եթե հանրապետության բոլոր գործազուրկների կառուցվածքում գերակշռում են 16-30 տարեկանները, ապա Նպաստառու գործազուրկները ավելի տարեց են՝ 55 տոկոսը 31-45 տարեկան են:

- Նպաստառուների կազմում շատ են միգրանտ ունեցող ՏՏ-ները: Միգրանտներ կան հանրապետության բոլոր ՏՏ-ների 16 տոկոսում և Նպաստառուների 18 տոկոսում: Վերջիններս գերազանցապես ունեն մեկ միգրանտ:
- Միգրացիայի հակումը փոքր-ինչ ավելի մեծ է Նպաստառու ՏՏ-ների շրջանում՝ 39 տոկոս, հանրապետական 36 տոկոսի դիմաց: Միգրացիայի նախընտրելի ուղղությունը Նպաստառուների համար Ռուսաստանը և ռուսալեզու երկրներն են (29 տոկոս): ՏՏ-ների 13 տոկոսը և Նպաստառու ՏՏ-ների 19 տոկոսը նշել է, որ կտեղափոխվի մշտական բնակության միայն Ռուսաստան կամ ռուսալեզու երկրներ: Սրանց մեջ համեմատաբար քիչ են երևանաբնակները: Եվրոպական երկրները նախընտրում են բոլոր ՏՏ-ների 18, իսկ Նպաստառուների՝ 16 տոկոսը: Ընդ որում, ՏՏ-ների 5-6 տոկոսը պատրաստ են տեղափոխվել մշտական բնակության միայն Եվրոպա, իսկ 3 տոկոսը՝ միայն ԱՄՆ: Այս ուղղություններով նախընտրությունը փոքր է գյուղաբնակ ՏՏ-ների շրջանում:
- Չնայած երկրում ստեղծված միգրացիոն պատկերին, այնուհանդերձ, մշտական, կայուն և օրինական աշխատանքի հեռանկարը չի ստիպի Հայաստանի ՏՏ-ների 61 տոկոսին և Նպաստառու ՏՏ-ների 58 տոկոսին տեղափոխվել բնակության արտերկիր:

Կենցաղային պայմաններ և կոմունիկացիաներ

- Հայաստանի ՏՏ-ների հիմնական մասը՝ ավելի քան 91 տոկոսը, բնակվում է իր սեփականությունը հանդիսացող տանը: Նպաստառուների դեպքում այս ցուցանիշը կազմում է 84 տոկոս: Մեկ շնչին ընկնող բնակատեղի միջին մակերեսը հանրապետությունում կազմում է 23.7մ²: Նպաստառուների դեպքում դա բավականին փոքր է՝ միջին հաշվով 17.7մ²: Նպաստառուները, ընդհանուր առմամբ, ի համեմատություն մյուս ՏՏ-ների, բավականին դժգոհ են իրենց կենցաղային պայմաններից:
- Հայաստանում ջեռուցման համար օգտագործվող հիմնական էներգիայի աղբյուրը բնական գազն է: Դրանից են օգտվում բոլոր ՏՏ-ների մոտ 50 տոկոսը, իսկ Նպաստառուների 34 տոկոսը: Վերջիններիս՝ 40 տոկոսի համար ջեռուցման հիմնական աղբյուր է վառելափայտը՝ ի տարբերություն հանրապետական 30 տոկոս մակարդակի:
- ՏՏ-ների մեծամասնությունը ջեռուցման համար կիրառում է նաև երկրորդային տարբերակներ (էներգիայի աղբյուրներ): Ջեռուցման լրացուցիչ աղբյուրների կառուցվածքում մեծ է բիոկառելիքի (աթարի) մասնաբաժինը՝ ՏՏ-ների ավելի քան 5 տոկոսը:
- Բացառությամբ բջջային հեռախոսների, մնացած կենցաղային տեխնիկայի և այլ սարքավորումների օգտագործման մակարդակը Նպաստառու ՏՏ-ներում բավականին ցածր է: Նպաստառուների շրջանում հատկապես ցածր է փոշեկուլների օգտագործումը:
- Հայաստանում մարդատար ավտոմեքենաներ կան և օգտագործվում են ՏՏ-ների 34 տոկոսի կողմից: Ըստ հետազոտության արդյունքների, Նպաստառուների 8.3 տոկոսն ունեն և օգտագործում են մարդատար ավտոմեքենաներ:
- Համակարգիչներ օգտագործվում են Հայաստանի ՏՏ-ների մոտ 63 տոկոսում, իսկ Նպաստառուների՝ բավականին ավելի փոքր,՝ 54 տոկոսում: Ինտերնետից Հայաստանում օգտվում է ՏՏ-ների 67 տոկոսը: Նպաստառուների շրջանում ինտերնետի օգտագործման ծավալը ևս բավականին զիջում է հանրապետական ցուցանիշին՝ 59 տոկոս:

Եկամուտները և ծախսերը

- Հայաստանում եկամուտների ամենատարածված աղբյուրն աշխատանքային եկամուտներն են (ՏՏ-ների 59 տոկոս): Դրան հաջորդում են կենսաթոշակները (ՏՏ-ների 48 տոկոս): Արտերկրից

աշխատանքային եկամուտներ և տրանսֆերտներ է ստանում SS-ների 26 տոկոսը: Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտներ ստանում է SS-ների 19 տոկոսը: Ակնհայտ է, որ Նպաստառու SS-ների դեպքում, եկամտի ամենատարածված աղբյուրն ընտանեկան նպաստն է:

- Նպաստառու SS-ների կազմում համեմատաբար շատ են Հայաստանում բնակվող բարեկամներից օգնություն ստացողները՝ 17 տոկոս (հանրապետական 11 տոկոսի դիմաց), ինչպես նաև հաշմանդամության թոշակներ ստացողները՝ Նպաստառու SS-ների 26 տոկոսը (բոլոր SS-ների 17 տոկոսի դիմաց):
- SS-ների սննդամթերքի սպառման զամբյուղում ամենից հաճախ հանդիպող մթերքները հացը և նպարեղենն են: Ձկնեղենը SS-ների սննդակարգում ամենաքիչ ընդգրկված մթերքն է: Այն տարվա ընթացքում ճաշացանկում գրեթե չի հայտնվում հանրապետության բոլոր SS-ների 58 տոկոսի և Նպաստառու SS-ների 64 տոկոսի մոտ:
- Տարվա ընթացքում մսամթերք չեն սպառում բոլոր SS-ների 12 տոկոսը և Նպաստառու SS-ների 19 տոկոսը: Թռչնի մսի և բանջարեղենի (կարտոֆիլի) սպառումը Նպաստառու SS-ների շրջանում ավելի մեծ է:
- SS-ների սննդի սպառման ծախսերի մեծ մասը (սննդամթերքի առանձնացված 10 հիմնական խմբերում) ուղղվում է ոգելից խմիչքների և ծխախոտի, ինչպես նաև հացի սպառմանը: Ոգելից խմիչքների և ծխախոտի դիմաց միջին ամսական ծախսը մեկ շնչի հաշվով կազմում է 5500 դրամ (Նպաստառու SS-ների դեպքում՝ 4400 դրամ), իսկ հացի ծախսը՝ 4800 դրամ (Նպաստառու SS-ների դեպքում՝ 5000 դրամ):
- SS-ների ավելի քան 22 տոկոսը գտնում է, որ իրենց կողմից կատարված ծախսերն ընդհանրապես չեն բավարարում իրենց SS առաջնային կարիքները: Մասնավորապես, սննդի ծախսերն ընդհանրապես չեն բավարարել, կամ մասամբ են բավարարել SS-ների 31 և Նպաստառու SS-ների 45 տոկոսին: Սոցիալական բնույթի ծախսերի մասով բավարարության գնահատականներն ավելի ցածր են:
- Նպաստառու տնտեսությունների 78.7 տոկոսը ընտանեկան նպաստներն ուղղում է կոմունալ վճարումների իրականացմանը: Նպաստների ծախսման հաջորդ խոշոր ուղղությունը սննդի ձեռք բերման ծախսերն են՝ 61.1 տոկոս:
- SS-ների 54 տոկոսը գտնում է, որ պետության կողմից սոցիալական աջակցության և, մասնավորապես, նպաստի ստացման կարիք ունի: Միևնույն ժամանակ, նպաստառու SS-ների 1.3 տոկոսը թեև հետազոտության իրականացման ընթացքում հանդիսացել է նպաստառու, խոստովանել է, որ դրա կարիքը չունի:

Պարտքային պարտավորությունները

- Հայաստանի SS-ների մոտ 64 տոկոսը և Նպաստառուների 72 տոկոսն ունեն պարտքային պարտավորություններ, որոնց միջին մեծությունը համապատասխանաբար կազմում է մոտ 2,800 և 1,600 ԱՄՆ դոլար:
- Զգալի մեծ է սննդամթերքի գնումների դիմաց խանութներին և վաճառակետերին պարտքեր ունեցողների քանակը: Հայաստանի բոլոր SS-ների 25 տոկոսը և Նպաստառուների 46 տոկոսն ունեն սննդամթերքի ձեռքբերման դիմաց չվճարումներ և պարտքեր:
- Միայն ֆինանսական ինստիտուտներին և անհատներին պարտքային պարտավորություններ (չի ներառում սննդի դիմաց պարտքերը և այլ չվճարումները) ունեն SS-ների 59 տոկոսը և Նպաստառուների 62 տոկոսը: Նման պարտքեր ունեցողները հատկապես շատ են գյուղերում՝

68 տոկոս, Նպաստառուների դեպքում՝ 73 տոկոս: Այս ՏՏ-ների 28 տոկոսն ունի մեկից ավելի պարտքային պարտավորություններ:

- Ֆինանսական ինստիտուտներին և անհատներին պարտքեր ունեցող ՏՏ-ների (59 տոկոս) ընդհանուր միջին պարտքը կազմում է 3,000 ԱՄՆ դոլար: Այս ՏՏ-ների մեծ մասը, կամ բոլոր ՏՏ-ների 52 տոկոսը, ունեն դրամային պարտք՝ միջին հաշվով 2000 ԱՄՆ դոլար: Արտարժույթով արտահայտված վարկեր կամ պարտքեր ունեն բոլոր ՏՏ-ների 10 տոկոսը, որի միջին մեծությունը, նման պարտավորություն ունեցող բոլոր ՏՏ-ների համար, կազմում է մոտ 6,800 ԱՄՆ դոլար: Արտարժույթով արտահայտված պարտք ունեն Նպաստառու ՏՏ-ների 9.9 տոկոսը՝ միջին հաշվով 2,600 ԱՄՆ դոլար:

Աղքատության և Ընտանեկան նպաստների հասցեականության գնահատականներ

- Հետազոտության տվյալների հիման վրա իրականացվել է ՏՏ-ների աղքատության մակարդակի անուղղակի գնահատումներ: Համաձայն դրանց, Հայաստանում ՏՏ-ների 2.2 տոկոսը ծայրահեղ աղքատ են, իսկ 9.4 տոկոսը՝ շատ աղքատ: Նպաստառու ՏՏ-ների 4.8 տոկոսն են ծայրահեղ աղքատ և 20 տոկոսը՝ շատ աղքատ: Արդյունքում, աղքատ, շատ աղքատ և ծայրահեղ աղքատ են բոլոր ՏՏ-ների 33 տոկոսը և Նպաստառուների՝ 56 տոկոսը:
- Չընդգրկման սխալը շատ աղքատների համար (ներառյալ՝ ծայրահեղ աղքատները) կազմում է 63 տոկոս, իսկ միայն ծայրահեղ աղքատների համար՝ 56 տոկոս: Այսպիսով, ծայրահեղ աղքատների կեսից ավելին Նպաստառու չէ:
- Ընդգրկման սխալը բոլոր աղքատների համար կազմում է 43.8 տոկոս: Շատ աղքատների համար ընդգրկման սխալը կազմում է 75 տոկոս, իսկ միայն ծայրահեղ աղքատների համար՝ 95 տոկոս: Այսինքն՝ համակարգում ընդգրկվածների 95 տոկոսը չեն հանդիսացել ծայրահեղ աղքատներ⁹:

Առողջական վիճակը

- ՏՏ անդամների սուբյեկտիվ գնահատականների համաձայն, Հայաստանի բնակչության մոտ 48 տոկոսը չունի որևէ առողջական խնդիր: Առողջական վիճակը վատ կամ ծայրահեղ վատ է մոտ 12 տոկոսի մոտ: Նպաստառուների դեպքում, չնայած ծայրահեղ վատ առողջական վիճակ ունեցողներն ավելի շատ են, առողջական ընդհանուր պատկերն ավելի լավ է:
- Բնակչության 27 տոկոսը կարիք ունի հետևողական բժշկական խնամքի: Նպաստառուների դեպքում հետևողական բժշկական խնամքի կարիք ունի 26 տոկոսը: Հետևողական բուժման կարիք ունեցողների մեծամասնությունը կանայք են: Նպաստառուների կազմում մեծ է հետևողական բուժման կարիք ունեցող երեխաների կշիռը:
- Հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում բոլոր ՏՏ-ների 66 տոկոսում և Նպաստառու ՏՏ-ների 71 տոկոսում անդամներից առնվազն մեկը բժշկական միջամտության կարիք է ունեցել:
- Չնայած անհրաժեշտությանը, բոլոր ՏՏ-ների 16 տոկոսը չեն դիմել բժշկի: Ընդ որում, անհրաժեշտության դեպքում բժշկի չեն դիմել բոլոր աղքատների 22 տոկոսը և Նպաստառու աղքատների 14 տոկոսը: Նպաստառուների շրջանում բժշկի դիմելիության ցուցանիշն ավելի բարձր է: Բժշկի չդիմելու հիմնական պատճառը ֆինանսական է:

⁹ ՏՀՀԿ կողմից իրականացվել է Ընտանեկան նպաստների համակարգի արդյունավետության գնահատում, որի արդյունքները հրապարակվում են առանձին (տե՛ս ՏՀՀԿ վեբ կայք):

- Հիվանդանոցային բուժօգնություն ստացածների գերազանց մեծամասնությունը կատարել է վճարումներ: Որևէ վճարում չի կատարել Նպաստառուների 22 տոկոսը: Հիվանդանոցային բուժման մեկ դեպքի դիմաց միջին վճարումը կազմել է 165 հազար դրամ:

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Բնակչության կառուցվածքը. ՀՀ ԱՎԾ և ՏՏԸՀ-2015 տվյալների համադրում	9
Գծապատկեր 2. Բնակչության տարիքային բուրգը. ՀՀ ԱՎԾ և ՏՏԸՀ-2015 տվյալների համադրում	10
Գծապատկեր 3. ՏՏ-ների բաշխումը ըստ բնակավայրերի, տոկոս	10
Գծապատկեր 4. ՏՏ-ների բաշխումը ըստ մարզերի, տոկոս	11
Գծապատկեր 5. Բնակչության տարիքային կառուցվածքը, տոկոս	11
Գծապատկեր 6. ՏՏ-ների անդամների միջին քանակը և տարիքը	12
Գծապատկեր 7. ՏՏ անդամների միջին տարիքն ըստ անդամների քանակի, տարի	12
Գծապատկեր 8. ՏՏ-ների բաշխումն ըստ անդամների քանակի	12
Գծապատկեր 9. Բնակչության գենդերային կառուցվածքը, տոկոս	13
Գծապատկեր 10. ՏՏ-ների կառուցվածքը ըստ երեխաների քանակի, տոկոս	13
Գծապատկեր 11. Բնակչությունը սեռատարիքային կառուցվածքը, տոկոս	14
Գծապատկեր 12. Գործազուրկների տարիքային կառուցվածքը, տոկոս	15
Գծապատկեր 13. ՏՏ-ների կառուցվածքը՝ ըստ ծերերի քանակի, տոկոս	16
Գծապատկեր 14. ՏՏ-ների քանակը՝ ըստ հաշմանդամների քանակի, տոկոս	16
Գծապատկեր 15. Միգրացիայի նախընտրելի ուղղությունները, տոկոս	17
Գծապատկեր 16. Միգրացիայի հակում չունեցող ՏՏ-ներն ըստ բնակավայրերի, տոկոս	18
Գծապատկեր 17. ՏՏ-ների կառուցվածքը ըստ բնակատեղի նկատմամբ սեփականության իրավունքի, տոկոս	19
Գծապատկեր 18. Մեկ շնչի հաշվով մակերեսն ըստ տան տեսակի, մ ²	20
Գծապատկեր 19. Կենցաղային պայմանների սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս	22
Գծապատկեր 20. ՏՏ-ների եկամուտների կառուցվածքը, տոկոս, բազմակի պատասխան	23
Գծապատկեր 21. ՏՏ-ների քանակ, որոնց փաստացի ծախսերի մակարդակն ընդհանրապես չի բավարարել նշված ուղղություններով առաջնային կարիքներին, տոկոս	27
Գծապատկեր 22. ՏՏ-ների քանակ, որոնց փաստացի ծախսերի մակարդակը լիովին բավարարել է նշված ուղղություններով առաջնային կարիքներին, տոկոս	27
Գծապատկեր 23. Միջին կոմունալ ծախսերն ամառային ամիսներին, դրամ	28
Գծապատկեր 24. Միջին ամսական կոմունալ ծախսերը ձմեռային ամիսներին, դրամ	28
Գծապատկեր 25. ՏՏ-ների վարկային և այլ պարտքային պարտավորությունների կառուցվածքը, տոկոս	29
Գծապատկեր 26. Սննդի ձեռքբերման դիմաց պարտքեր ունեցողները և դրանց ընդամենը միջին պարտքը	29
Գծապատկեր 27. Բացառապես սննդի ձեռքբերման դիմաց պարտքեր ունեցողները և սննդի ձեռքբերման դիմաց միջին պարտքը	30
Գծապատկեր 28. Ֆորմալ վարկեր և անհատներից պարտքեր ունեցող ՏՏ-ներն ըստ բնակավայրերի, տոկոս*	30
Գծապատկեր 29. Պարտքային պարտավորություններ ունեցող ՏՏ-ները, տոկոս	31
Գծապատկեր 30. ՏՏ-ների պարտքի միջին մեծությունը, ԱՄՆ դոլար	31
Գծապատկեր 31. Աղքատության գնահատականներն ըստ բնակավայրերի, տոկոս	33
Գծապատկեր 32. Ընդգրկման և չընդգրկման սխալի գնահատականները, տոկոս	33
Գծապատկեր 33. Ընդգրկման սխալի գնահատականներն ըստ բնակավայրերի, տոկոս	34
Գծապատկեր 34. Չընդգրկման սխալի գնահատականներն ըստ բնակավայրերի, տոկոս	34
Գծապատկեր 35. ՏՏ-ների գնահատականները Ընտանեկան նպաստի ստացման կարիքի վերաբերյալ, տոկոս ...	35
Գծապատկեր 36. ՏՏ-ների կողմից նպաստի ծախսման հիմնական ուղղությունները, տոկոս	35
Գծապատկեր 37. Բնակչության առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս	36
Գծապատկեր 38. Բնակչության առողջական վիճակի գնահատականներն ըստ գենդերի, տոկոս	36
Գծապատկեր 39. Հետևողական բժշկական խնամքի կարիքի սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս	37
Գծապատկեր 40. Հետևողական բժշկական կարիք ունեցողների գենդերային կառուցվածքը, տոկոս	37
Գծապատկեր 41. Բժշկական միջամտության անհրաժեշտություն ունեցողները վերջին 12 ամիսներին	38
Գծապատկեր 42. Բժշկական օգնության կարիքը և բժշկի դիմելիությունը ՀՀ բոլոր ՏՏ-ների համար, տոկոս	38
Գծապատկեր 43. Բժշկական միջամտության կարիքը և հիվանդանոցային բուժօգնություն ստացածները	39
Գծապատկեր 44. Հիվանդանոցային բուժօգնության դիմաց վճարում կատարած Նպաստառուները և միջին վճարումը	39
Գծապատկեր 45. Հիվանդանոցային բուժօգնության դեպքերի բաշխումն ըստ տևողության և միջին վճարումների 40	

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. ՏՏԸՀ-2015-ի գլխավոր համակցության ստրատիֆիկացիան	6
Աղյուսակ 2. ՏՏԸՀ-2015-ի ընտրանքային համակցությունը և սպասվող սխալը.....	7
Աղյուսակ 3. ՏՏԸՀ-2015 հետազոտությունում ընդգրկված բնակավայրերի քանակն ըստ մարզերի	7
Աղյուսակ 4. Բնակչության կրթական մակարդակը, տոկոս	14
Աղյուսակ 5. ՏՏ-ների կառուցվածքը ըստ գործազուրկների քանակի, տոկոս	15
Աղյուսակ 6. ՏՏ-ների կառուցվածքը ըստ միգրանտների քանակի, տոկոս	16
Աղյուսակ 7. Միգրացիայի նախընտրելի ուղղությունները, ըստ բնակավայրի տեսակի, տոկոս.....	17
Աղյուսակ 8. Արտերկիր մշտական բնակության տեղափոխման դեպքում ակնկալվող միջին ամսական եկամուտի գնահատականները, մեկ ՏՏ համար, ԱՄՆ դոլար.....	18
Աղյուսակ 9. ՏՏ-ների բաշխումն ըստ բնակավայրերի և տան տեսակի, տոկոս.....	19
Աղյուսակ 10. Ջեռուցման համար կիրառվող տարբերակները (էներգիայի աղբյուրը), տոկոս	20
Աղյուսակ 11. Հիմնական կենցաղային և այլ ապրանքների օգտագործումը ՏՏ-ներում, տոկոս	21
Աղյուսակ 12. Ինտերնետի օգտագործումը ՏՏ-ներում, տոկոս	21
Աղյուսակ 13. ՏՏ-ների եկամուտների կառուցվածքը ըստ բնակավայրերի, տոկոս, բազմակի պատասխան	24
Աղյուսակ 14. Հիմնական սննդամթերքի սպառումը և մեկ շնչի հաշվով միջին ամսական ծախսերը.....	25
Աղյուսակ 15. ՏՏ-ների կողմից վերջին 12 ամիսների ընթացքում սննդի և ոչ պարենային ծախսերի բավարարության գնահատականները, տոկոս.....	25
Աղյուսակ 16. ՏՏ-ների կողմից վերջին 12 ամիսների ընթացքում սոցիալական կարիքներին ուղղված ծախսերի բավարարության գնահատականները, տոկոս	26
Աղյուսակ 17. ՏՏ-ների աղքատության մակարդակի գնահատականների համադրում, տոկոս.....	32
Աղյուսակ 18. Բժշկի չդիմելու պատճառները, տոկոս	38

Օգտագործված հապավումների ցանկ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԳՀ	Գլխավոր համակցություն
ԴՊ	Դժվարացել է պատասխանել
ԵՄ	Եվրոպական Միություն
ԸՀ	Ընտրանքային համակցություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
մլն	Միլիոն
մլրդ	Միլիարդ
ՉՀ	Չի հաշվարկվել
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏՁՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)
ՏՏ	Տնային տնտեսություն
ՏՏԸՀ	Տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություն
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն